ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 25 հունիսի 2018 թվականի N 4/18 որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանք: Հաշվեքննությունն իրականացվել է Հանրային ֆինանսական քաղաքականության բարեփոխումները Հայաստանում» Եվրոպական միության բյուջետային աջակցության թիվ ԵՀԳ/2015/038-229 համաձայնագրի պահանջով:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայություն»:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները» «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ և ութերորդ վարչությունների կողմից, որոնց աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Արա Նռանյանը: Հաշվեքննության ողջ ընթացքում հաշվեքննողներին ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)-ի կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին ցուցաբերվող աջակցության ծրագրի շրջանակներում հրավիրված փորձագետ՝ որակավորված աուդիտոր Գագիկ Գրիգորյանի կողմից:

I. ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ծրագրերի կատարման վերաբերյալ 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն) և Ծառայության կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծառայության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանի:

Ծառայության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվության և օրենքներին ու իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները» «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից, իսկ ծրագրերի կատարումը՝ էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ աուդիտորական ապացույցի ձեռք բերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և Ծառայության կողմից ծրագրերի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, ճշմարիտ ներկայացման և ծրագրերի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Հաշվեքննության աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելու, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ամբողջական ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցները մեր կարծիքի հիմնավորելու համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմք

Հաշվեքննությամբ պարզվել է, որ տարվա ընթացքում առկա են դեպքեր, երբ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ սահմանը հատելու վերաբերյալ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝

- երկրից 12 ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուներին անկանխիկ եղանակով փաստացի վճարվել է 702,651.2 հազ. դրամ, կանխիկ եղանակով՝ 619,099.1 հազ. դրամ,
- երկրից 3-ից 9-ը ամիս բացակայող աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուներին կանխիկ եղանակով փաստացի վճարվել է 4,023,370.2 հազ. դրամ:

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ կետի, կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ պատշաճ կարգով ներկայանալ բանկ, իսկ 5-րդ կետի համաձայն կանխիկ եղանակով կենսաթոշակի գումարի տրամադրումը կատարվում է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջի և սահմանհատումների բազայի համադրման արդյունքում առաջանում է ռիսկ, որ աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուները, որոնք պահանջվող ժամանակաշրջանի ընթացքում պատշաճ կարգով չեն

ներկայացել համապատասխան կառույց, ստացել են կենսաթոշակ, որը ՀՀ օրենսդրությամբ ենթակա էր դադարեցման:

Հաշվի առնելով ՍԷԿՏ համակարգից ստացվող տեղեկատվության սահմանափակումները, ինչպես նաև Ծառայության կողմից բանկ ներկայացած ֆիզիկական անձանց նույնականացման ժամանակ հսկողական գործընթացի ոչ բավարար մակարդակը, առկա է իրավիճակ, երբ հաշվեքննողը վերոնշյալ գումարների մասով հնարավորություն չի ունեցել ձեռք բերել անհրաժեշտ և բավարար ապացույցներ հավաստիանալու համար, թե արդյոք դրանք իրավաչափ են, ճշմարիտ և արժանահավատ:

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝

- Ծառայության ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում Ծառայության կողմից ծրագրերի կատարման վերաբերյալ 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունը, պատրաստված 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի համաձայն:
- Ծառայության կողմից 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կատարված ծրագրերը բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերին և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Արա Նռանյան՝
ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ
28 դեկտեմբեր 2018 թվական
ՀՀ Հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրերի անվանումները	2017թ.			
	Հաստատված բյուջե հազ. ՀՀ դրամ	Փոփոխություն հազ. ՀՀ դրամ	Ճշտված բյուջե հազ. ՀՀ դրամ	Դրամարկղային ծախս հազ. ՀՀ դրամ
1	2	3	4	5
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	**353,639,132.4**	**(4,500,839.8)**	**349,138,292.6**	**348,386,043.5**
«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճար	45,600.0	(8,453.3)	37,146.7	36,746.7
«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի հետ կապված վճարման ծառայություններ	456.0	-	456.0	185.6
Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված՝ խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում	90,231.2	(5,931.2)	84,300.0	83,903.5
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովում	24,323,671.6	896,614.4	25,220,286.0	25,214,732.1
Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովում	634,945.0	(40,945.0)	594,000.0	592,601.7
Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ	13,958,477.4	(75,186.4)	13,883,291.0	13,878,809.9
ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ	2,632,317.8	(133,202.2)	2,499,115.6	2,490,185.3
Աշխատանքային կենսաթոշակներ	223,469,456.1	(2,394,104.0)	221,075,352.1	220,741,917.1
Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճար	154,800.0	6,416.3	161,216.3	160,781.7
Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	4,909,000.0	-	4,909,000.0	4,872,969.9
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	39,498,346.6	(2,509,433.9)	36,988,912.7	36,752,295.2
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	2,866,536.0	18,180.0	2,884,716.0	2,872,197.3
Մայրության նպաստի վճարում (հղիության և ծննդաբերության նպաստ)	10,432,641.9	-	10,432,641.9	10,432,324.8
Երեխային ծննդյան միանվագ նպաստ	9,550,650.0	638,625.9	10,189,275.9	10,156,311.1
Վետերանների պատվովճարներ	418,800.0	(68,800.0)	350,000.0	348,019.3
ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրում	11,774,740.0	(432,740.0)	11,342,000.0	11,319,653.6
«ՎՏԲ- Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին	1,485,148.6	-	1,485,148.6	1,484,742.4

ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում				
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	2,102,608.1	(59,189.9)	2,043,418.2	2,003,165.9
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթի ապահովում	44,856.0	(5,996.0)	38,860.0	38,100.0
Կենսաթոշակային ապահովության, Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ	1,941,118.5	(352,520.2)	1,588,598.3	1,587,043.6
ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում	2,659,238.2	-	2,659,238.2	2,658,546.3
Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն	11,016.0	-	11,016.0	7,560.0
Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն	1,101.6	-	1,101.6	498.0
Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ	7,000.0	-	7,000.0	6,950.0
Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի ծառայություններ	42,000.0	-	42,000.0	42,000.0
Սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկում	18,240.0	-	18,240.0	18,240.0
«ՎՏԲ- Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման հետ կապված ծառայություններ	17,821.8	-	17,821.8	17,814.8
Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայություններ	1,548.0	-	1,548.0	775.3
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայություններ	473,980.2	(28,050.9)	445,929.3	441,803.2
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայություններ	28,665.4	(9,274.7)	19,390.7	19,207.9
Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներ	44,120.4	-	44,120.4	44,120.4
Արտասահմանյան պաշտոնական գործողումներ	0.0	1,301.3	1,301.3	1,301.3
Պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող ծախսեր	0.0	2,690.0	2,690.0	2,690.0
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	0.0	59,160.0	59,160.0	57,850.0

II. ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

Կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել և, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջը, արձանագրությունների տեսքով ներկայացվել են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Ծառայությանը, որոնց վերաբերյալ ներկայացված պարզաբանումները և բացատրությունները էականորեն չեն տարբերվում արձանագրված ռիսկերի մասով մեր կողմից տրված գնահատականներից:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Կենսաթոշակի իրավունքի, կենսաթոշակ ստանալու իրավունքի, կենսաթոշակ նշանակելու ու վճարելու, կենսաթոշակի իրավունքը դադարեցնելու և վերականգնելու, կենսաթոշակի վճարումը դադարեցնելու և վերականգնելու համար առկա օրենսդրական կարգավորումները տալիս են տարընթերցման հնարավորություն, որը կենսաթոշակների հետ կապված հարաբերությունները դարձնում է ռիսկային:

Անհասկանալի է միևնույն հավասար պայմաններ չունեցող քաղաքացիներին կենսաթոշակների միևնույն չափաքանակի վճարումները

Ավելին, բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող և հոգեբուժարաններում բուժվող անձանց կենսաթոշակային հարաբերությունները ենթադրում են երկակի մոտեցումներ, որոնք հիմնված չեն սոցիալական հավասարության և համերաշխության սկզբունքի վրա: Հաշվեքննությամբ պարզվել է, որ որոշ դեպքերում վճարվում է կենսաթոշակների միայն աշխատանքային մասը, իսկ մյուս դեպքերում վճարվում է կենսաթոշակն ամբողջությամբ՝ հիմնականում լիազորված անձանց միջոցով: Ավելին, կենսապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելու պետական կենսաթոշակային համակարգի սկզբունքի

տեսանկյունից նույնպես անհասկանալի է միևնույն հավասար պայմաններ չունեցող քաղաքացիներին կենսաթոշակների միևնույն չափաքանակի վճարումները: Եթե կենսաթոշակառուն արդեն իսկ ընդգրկված է այլ պետական ծրագրերով ֆինանսավորվող հարաբերություններում (հոգեբուժարաններում երկարատև խնամք, քրեակատարողական հիմնարկներում պատժի կրում, բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող և այլն), որտեղ ապահովվում է վերջինիս կենսաապահովման նվազագույն զամբյուղը, ապա ենթադրաբար նրանց կենսաթոշակների վճարումը անհավասար պայմաններ է ստեղծում այլ կենսաթոշակառուների նկատմամբ՝ դրանով իսկ խաթարելով սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության սկզբունքները:

Առաջարկ

Առաջարկվում է իրականացնել համապատասխան օրենսդրական բարեփոխումներ, որոնց համաձայն հոգեբուժարաններում երկարատև քրոնիկ բուժօգնություն ստացող և քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող կենսաթոշակառուների կենսաթոշակ ստանալու իրավունքը և կենսաթոշակի վճարումը կդադարեցվի բուժօգնության և պատժի կրման ամբողջ ժամանակահատվածի համար և կվերականգնվի բուժման ավարտից կամ պատիժը կրելուց հետո՝ անձի կողմից համապատասխան սոցիալական մարմիններ դիմելու դեպքում:

Ղեկավարության արձագանք

Հարկ է նկատի ունենալ, որ կենսաթոշակային օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանափակում հոգեբուժական հաստատությունում բուժվող անձի կենսաթոշակի իրավունքի իրացման հնարավորությունը: Ավելին, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասի իմաստով, հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը կարող է վճարվել (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվել է, կենսաթոշակ վճարելը վերսկսվել) նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով: Միաժամանակ, ներկայումս որևէ իրավական ակտով սահմանված չէ խնդրո առարկա դեպքերի համար տեղեկատվության փոխանակության ընթացակարգեր:

2. *Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում*

Կենսաթոշակների տեսակների սահմանումները, դրանց տարբերակումները, ստաժի հաշվարկման պայմաններն ու մոտեցումները իրենց մեջ կրում են ռիսկեր և սուբյեկտիվ գործոնի բարձր ազդեցություն

Կենսաթոշակների տեսակների սահմանումները, դրանց տարբերակումները, ստաժի հաշվարկման պայմաններն ու մոտեցումներն իրենց մեջ կրում են ռիսկեր և սուբյեկտիվ գործոնի բարձր ազդեցություն, կապված տեղեկատվական համակարգերում ամբողջական տեղեկատվության բացակայության հետ: Ի վերջո, ՀՀ Սահմանադրությամբ և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է մարդու սոցիալական ապահովության իրավունքը, որն իրականացվում է ելնելով սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության ապահովման, կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելու սկզբունքներից: Հետևաբար, հիմնական նպատակը կենսաթոշակի իրավունքի իրացման ընթացքում սոցիալական ապահովության այլ ծառայությունների հասանելիությունն է: Մինչդեռ, առկա են կենսաթոշակի 6 տեսակներ, որոնք ունեն հաշվարկման առանձին սկզբունքներ, տարիքային տարբեր կազմեր և այլն, ինչպես նաև առանձին զինվորական կենսաթոշակների տեսակներ: Սոցիալական համերաշխության և արդարության սկզբունքը ենթադրում է սերունդների միջև գիտակցված համերաշխություն, երբ աշխատունակ տարիքում անձինք գիտակցում են իրենց եկամուտներից ավագ սերունդներին, անաշխատունակներին և սոցիալական աջակցման կարիք ունեցող անձանց մասհանումների կատարման կարևորությունը՝ վերջիններիս կենսապահովման նվազագույն պայմաններ ապահովելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ առկա է առանձին մասնագիտություններ և կյանքի համար վնասակար/վտանգավոր աշխատանքներ իրականացնելը խրախուսելու քաղաքականության անհրաժեշտություն, ինչը ապահովվում է կենսաթոշակի տարիքի այլ շեմ նշանակելով կամ կենսաթոշակի հաշվարկային այլ մեխանիզմներ ու չափեր կիրառելով: Սակայն այդ անձանց առողջությանը ուղղակի կամ անուղղակի հասցված վնասը վերականգնելը ենթադրում է առողջապահական ծառայությունների փաթեթի ընդլայնում, վերջիններիս կենսաթոշակային տարիքի շեմի նվազեցում, սակայն ոչ կենսաթոշակների հաշվարկման սկզբունքների տարբերակում, ինչն էլ պատճառ է հանդիսանում չարաշահումների համար:

Առաջարկ

Սոցիալական ոլորտում քաղաքականություն իրականացնող լիազոր մարմնի պարտավորությունը պետք է հանդիսանա քաղաքացիների նվազագույն կենսապահովման պայմանների իրական ապահովումը և յուրաքանչյուր տարեց մարդու արժանապատիվ գոյության ապահովման նպատակով վերջիններիս համար միասնական սկզբունքի հիման վրա հաշվարկվող գումարի վճարումը, ինչպես նաև վերջիններիս առողջապահական ծառայությունների և հասարակությանը ներառման նպատակով այլ ծառայությունների փաթեթների սահմանումը: Այսինքն, տարեցներին աջակցող ծրագրերի կազմումը և իրականացումը պետք է հիմնված լինի առաջին հերթին վերջիններիս համընդհանուր կարիքների բավարարման բազային ծավալների վրա և այնուհետև՝ ըստ առանձին ծառայությունների փաթեթների վրա (օրինակ, բժշկական ծառայությունների փաթեթ, տեղաշարժման նպատակով՝ տրանսպորտային ծառայությունների փաթեթ, մշակութային և այլ ծառայությունների փաթեթ): Կենսաթոշակի հաշվարկման համար չպետք է կիրառվեն ստաժի չափի կամ այլ մասնակի հասկացություններ, և կենսաթոշակառուները պետք է տարբերվեն միայն առողջապահական, մշակութային, տրանսպորտային կամ այլ ծառայությունների փաթեթների ծավալներով, որը կփոխհատուցի կենսաթոշակառուների կողմից կյանքի ընթացքում վնասակար/վտանգավոր աշխատանքներ իրականացնելու հանգամանքը: Տարբերակումները կարող են կիրառվել նաև որոշակի խմբերի համար կենսաթոշակի անցնելու տարիքի այլ շեմ սահմանելու միջոցով:

Ղեկավարության արձագանք

Արձանագրության մեջ նշված են բազմաթիվ և բազմաբնույթ պայմաններով կենսաթոշակի և փոխկապակցված այլ իրավունքների ծագման, ձևակերպման, փոփոխման, դադարեցման իրավական կարգավորումների առկայության, ինչպես նաև խնդրո առարկային վերաբերելի՝ 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՕ-243-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք)՝ բազմաթիվ անգամ փոփոխվելու հանգամանքի մասին գրառումները:

Հարկ է նկատի ունենալ, որ կենսաթոշակի և փոխկապակցված այլ իրավունքների ծագման, ձևակերպման, փոփոխման, դադարեցման համար անհրաժեշտ պայմանների ամրագրումն ուղղված է կենսաթոշակային հարաբերություններում համապատասխան ժամանակահատվածներում գնահատված ռիսկերը, այդ թվում՝ ֆինանսական ռիսկերը, հնարավորինս կանխարգելելու, չեզոքացնելու (նվազեցնելու), և պետական բյուջեի միջոցներն արդյունավետ և նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Ինչ վերաբերում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ընդունման պահից այն բազմաթիվ անգամ փոփոխվելու հանգամանքին, և դա, որպես օրենսդրական ռիսկ դիտարկելուն, ապա հարկ է նկատի ունենալ, որ ցանկացած օրենք, որպես վարքագծի պարտադիր կանոն պարունակող ակտ, գործում և փոփոխվում է ժամանակի և տարածության մեջ: Հասարակության զարգացումը, հասարակական հարաբերությունների վերափոխումները ինքնին ենթադրում են կոնկրետ ժամանակահատվածում ծագած կամ փոփոխված հարաբերության համապատասխան իրավական կարգավորում:

3. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Լիազորագրերով կենսաթոշակների վճարումները նույնպես ռիսկային են, քանզի օրենքով չի կարգավորվում լիազորագիր ստացող անձի և կենսաթոշակառուի փոխհարաբերությունները

Լիազորագրերով կենսաթոշակների վճարումնե-րը նույնպես ռիսկային են, քանզի օրենքով չի կարգավորվում լիազորագիր ստացող անձի և կենսաթոշակառուի փոխհարաբերությունները, ազգակցական կապը և այլն: Ավելին, քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է) նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով: Հոգեբուժարաններում բուժվողների և քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրողների տվյալներով բանկային վճարումները կազմել են համապատասխանաբար 164,703.2 հազ. դրամ և 3,709.9 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի վճարումները՝ 438,162.0 հազ.դրամ և 44,575.7 հազ. դրամ:

Առաջարկ

Առաջարկվում է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ, որով կբացառվի լիազորագրերով վճարումների պրակտիկան հոգեբուժարաններում բուժվողների և քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրողների աշխատանքային կենսաթոշակի շահառուների համար: Անհրաժեշտ է կազմակերպել միջնորդավորված գումարների տրամադրումը շահառուներին սոցիալական աշխատողների կամ սոցիալական ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպություններին պատվիրակելու միջոցով, ինչը կարող է հանդիսանալ լավագույն երաշխիքը գումարների հասցեականության և նպատակային օգտագործման համար:

Ղեկավարության արձագանք

Արձանագրության մեջ, օրենսդրական ռիսկերի թվում, նշված են նաև լիազորագրերով կենսաթոշակների վճարման և քրեակատարողական հիմնարկի կամ հոգեբուժական հաստատության ղեկավարի կողմից տրված լիազորագրի հիման կենսաթոշակ վճարելու, այդ թվում՝ կենսաթոշակ վճարելը վերսկսելու վերաբերյալ գրառումները:

Հարկ է նկատի ունենալ, որ ներկայացուցչության վերաբերյալ նորմերը, հաշվի առնելով դրանց կիրառման շրջանակի, իրավական կարգավորման առարկայի, նպատակների և խնդիրների, իրավասությունների ծավալի, սուբյեկտիվ կազմի, ծագման և դադարեցման հիմքերի առանձնահատկությունները՝ ձևավորում են ինքնուրույն ինստիտուտ, որն ունի բացառապես քաղաքացիաիրավական բնույթ:

Քաղաքացիական հարաբերության մեկ մասնակցի կողմից մյուս մասնակցի անունից հանդես գալը, և անմիջականորեն ներկայացվողի համար քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ստեղծումը, փոփոխումն ու դադարեցումն իրականացվում է գրավոր լիազորագրի հիման վրա: «Քաղաքացիական օրենսգիրքը», որպես ներկայացուցչության հետ կապված հարաբերությունները կարգավորող ակտ, չի սահմանափակում ներկայացուցչության ապահովման հնարավորությունը՝ ներկայացուցչի և ներկայացվողի որևէ փոխհարաբերության, առավել ևս ազգակցական կապի պարտադիր առկայության պայմանով:

Միաժամանակ, «Քաղաքացիական օրենսգրքի» 321-րդ հոդվածը, որը սահմանում է լիազորագրի հասկացությունը, լիազորագրին ներկայացվող պահանջները, լիազորագրի ձևը և այլն, նոտարի վավերացրած լիազորագրերին է հավասարեցնում նաև՝ ազատազրկման վայրերում գտնվող անձանց լիազորագրերը՝ վավերացված ազատազրկման համապատասխան հաստատության պետի կողմից, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող չափահաս գործունակ քաղաքացիների լիազորագրերը՝ վավերացված նման հաստատության տնօրինության կամ բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) կողմից:

Ըստ այդմ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ համապատասխան կարգավորումները բխում են «Քաղաքացիական օրենսգրքի» պահանջներից:

4. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Կանոնակարգված չլինելու պատճառով առկա են «վճարված կարգավիճակ ունեցող» գործերի հանրագումարի և փաստացի կատարողականի միջև տարբերություններ

Կանոնակարգված չէ հետ վերադարձված գումարների («Հայփոստ» ՓԲԸ, բանկեր, առանձին ֆիզիկական անձեր), ինչպես նաև ԴԱՀԿ կողմից բռնագանձված գումարների վճարների հաշվառումը և համադրումը «էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի միջոցով, որն էլ հիմք է հանդիսանում համակարգի «վճարված կարգավիճակ ունեցող» գործերի հանրագումարի և փաստացի կատարողականի միջև տարբերությունների:

Առաջարկ

Առաջարկվում է ստեղծել ԴԱՀԿ համակարգի և բանկերի հետ փոխգործակցման ինքնաշխատ համակարգեր: Պետք է մշակել տեղեկատվական այնպիսի ենթահամակարգ, որը հնարավորություն կտա ԴԱՀԿ բռնագանձված գումարների հետ կապված գործընթացներն իրականացնել ինքնաշխատ կարգով: Բացի դա, բանկերի կողմից վերադարձվող գումարները նույնպես պետք է արտացոլվեն համակարգում:

Ղեկավարության արձագանք

1. Էլեկտրոնային ցուցակների և փաստացի ֆինանսավորման տարբերությունը գոյանում է հետևյալ պատճառներով՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ստեղծելու նպատակն է ապահովել անձի կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացումը:

Ներկայումս, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի առանձնացված տեղեկատվական ենթահամակարգերի միջոցով իրականացվում են միայն կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման՝ քաղաքացիների կենսաթոշակի և նպաստի իրավունքի ձևակերպման, փոփոխման և դադարեցման հետ կապված գործառույթները:

Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը շարունակական կատարելագործվում է առանձին ենթահամակարգերի (ծրագրային ապահովություն) մշակմամբ:

Ծառայության և հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և վճիռների հիման վրա կենսաթոշակից կատարվող

պահումների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանակվում է Հարկադիր կատարման ծառայության կողմից մշակված և 2010 թվականին երկու կառույցների ղեկավարների կողմից հաստատված համատեղ հրամանի (այդ պահին առկա իրավակարգավորումների շրջանակներում գրանցված չի եղել որպես գերատեսչական նորմատիվ իրավական ակտ) շրջանակներում գործող տեղեկատվական համակարգի միջոցով (տեղեկատվության փոխանակության գործող մեխանիզմը բարդ է, աշխատատար և իրականացվում է ոչ ինքնաշխատ եղանակով), որը չի հանդիսանում պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի առանձին ենթահամակարգ:

Անհրաժեշտություն է առաջացել տեղեկատվության փոխանակության և կիրառության համար մշակել տեղեկատվական այնպիսի ենթահամակարգ, որը հնարավորություն կտա վերոնշյալ գործընթացն իրականացնել բացառապես ինքնաշխատ եղանակով: Մասնավորապես՝ գործընթացին առնչվող որոշումները կկայացվեն ինքնաշխատ՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի միջոցով և յուրաքանչյուր ամսվա բռնագանձվող (բռնագանձված) գումարների ֆինանսավորման հայտ-պահանջագրերը ևս կձևավորվեն համակարգի միջոցով:

Ծառայության կողմից մշակվել և ներկայումս շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Կանոնակարգված չէ հետ վերադարձված գումարների (Հայփոստ, բանկեր, առանձին ֆիզիկական անձեր) հաշվառումը և համադրումը «էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի միջոցով, որն էլ հիմք է հանդիսանում համակարգի «վճարված կարգավիճակ ունեցող» գործերի հանրագումարի և փաստացի կատարողականի միջև առկա տարբերությանը (կից ներկայացվում է տարբերության պարզաբանումը՝ աղյուսակի տեսքով՝ Texekanq_el.cucakpastacitarberutyun.xls անվանումով):

ՀԾՀ համարանիշով որոնելու դեպքում հնարավոր չէ ստանալ տվյալ ՀԾՀ-ով գրանցված կենսաթոշակային բոլոր գործերը և վերահսկել բոլոր վճարումները և գնահատել ռիսկերը

5. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Էլեկտրոնային կենսաթոշակների համակարգում նույնականացման հիմք են հանդիսանում շահառուների կենսաթոշակային գործերը և անձի հանրային ծառայության համարանիշով (այսուհետ՝ ՀԾՀ) որոնելու դեպքում հնարավոր չէ ստանալ տվյալ ՀԾՀ-ով գրանցված կենսաթոշակային բոլոր գործերը և վերահսկել բոլոր վճարումները և գնահատել ռիսկերը:

Առաջարկ

Պետական կենսաթոշակների էլեկտրոնային շտեմարանում ըստ անձի ՀԾՀ-ի կենսաթոշակների վճարումների որոնման և վերլուծման հնարավորությունների գործարկում, վճարման ցուցակներում բացի գումարն ստացող անձի տվյալներից տվյալ կենսաթոշակի տեսակի համար շահառու հանդիսացող անձի անհատական տվյալների առկայության ապահովում:

Ղեկավարության արձագանք

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ: Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տեղեկատվական համակարգերը, տվյալ դեպքում՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգը, իր գործիքակազմով, ապահովում է նշված օրենսդրական կարգավորման իրականացումը՝ բացառելով միևնույն անձին կենսաթոշակի թե՛ նույն, թե՛ տարբեր տեսակի նշանակումը: Արձանագրությամբ նշված՝ 10556 դեպքով (255 անձ) «կրկնակի վճարումներ»-ի վերաբերյալ նախորդիվ Հաշվեքննիչ պալատի ՀՊԵ-ԱՆ-97 գրությամբ Ծառայությանը տրամադրած ցանկի (ֆայլ՝ Double_Pay.xlsx) ուսումնասիրությունը (ուսումնասիրության արդյունքում ձևավորված Double_Pay_Pat.xlsx ֆայլը կցվում է) ցույց տվեց, որ.

1) ցանկում նշված անձանց մի մասը հանդիսանում է խնամակալ մեկ կամ մի քանի գործերով,

2) ցանկում նշված անձանց մյուս մասը հանդիսանում է մի գործով թաղման նպաստ և (կամ) կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումար ստացող, մյուս գործով՝ կենսաթոշակառու (ծերության, կերարկրողին կորցնելու դեպքում և հաշմանդամության նպաստառու),

3) անձը, ով ստանում է կենսաթոշակ և այլ վճարատեսակ (պարգևավճար, աշխատանքային խեղման փոխհատուցում և այլն) իր դիմումի հիման վրա մի վճարատեսակը ստանում է կանխիկ եղանակով, մյուսը՝ անկանխիկ եղանակով,

4) Հաշվեքննիչ պալատի կողմից, համադրման ընթացքում հաշվի չի առնվել գործի համարի եզակիությունը և խնամակալության վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ համադրումը կատարվել է ըստ ստացող անձի ՀԾՀ-ի:

Միաժամանակ, Հաշվեքննիչ պալատի N ՀՊԵ-ԱՆ-119 գրության շրջանակներում Հաշվեքննիչ պալատի և Ծառայության մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությամբ կրկնակի վճարումների դեպքեր չեն արձանագրվել:

Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր անձի տվյալներն առաջին անգամ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգ ներառելուց (դիմումի կամ վարչական ակտի հիման վրա) կատարվում է նույնականացում բնակչության պետական ռեգիստրի (այսուհետ՝ ԲՊՌ) տեղեկատվության հետ (ԲՊՌ տեղեկատվությունը թարմացվում է շաբաթական պարբերությամբ, իսկ լրացուցիչ համադրումներ իրականացվում են նաև յուրաքանչյուր ամիս՝ վճարման ցուցակներ ձևավորելուց առաջ)՝ ՀԾՀ-ով և (կամ) անձը հաստատող փաստաթղթով: Բացառություն են կազմում այն անձանց տվյալները, ում վերաբերյալ դիմում տալու պահին բացակայում է ԲՊՌ-ի համապատասխան տեղեկատվությունը: Այդ անձանց համար համակարգում մուտքագրվում է դիմումը, որին դրական ընթացք կարող է տրվել բացառապես ԲՊՌ-ի տեղեկատվությունը համակարգ ներբեռնելուց հետո: ԲՊՌ-ում անձի կամ անձի հաշվառման մասին տեղեկատվության բացակայության դեպքում համակարգը մերժում է դիմումը՝ ՀՀ-ում հաշվառում չունենալու հիմքով:

6. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հոգեբուժական բուժօգնություն ստացող անձանց վճարումների վերաբերյալ ամբողջական գնահատական հնարավոր չի եղել իրականացնել 2017թ-ի մայիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում բուժօգնություն ստացած անձանց անհատական տվյալները չտրամադրելու պատճառով, իսկ ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ համադրության արդյունքում չեն նույնականացվել 2017թ. -ի հունվար-ապրիլ ժամանակահատվածում բուժօգնություն ստացած 132 անձի տվյալներ:

Առաջարկ

Գնահատել հոգեբուժական հիվանդներին կենսաթոշակների վճարումների հետ կապված ռիսկերը, գնահատել տվյալների առկայությունը, հասանելիությունը, առաջարկություններ ներկայացնել ռիսկերի հաղթահարման ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ կատարելու համար:

Ղեկավարության արձագանք

Հարկ է նկատի ունենալ, որ կենսաթոշակային օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանափակում հոգեբուժական հաստատությունում բուժվող անձի կենսաթոշակի իրավունքի իրացման հնարավորությունը: Ավելին, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասի իմաստով, հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը կարող է վճարվել (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվել է, կենսաթոշակ վճարելը վերսկսվել)

նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով: Միաժամանակ, ներկայումս որևէ իրավական ակտով սահմանված չէ խնդրո առարկա դեպքերի համար տեղեկատվության փոխանակության ընթացակարգեր:

Պարզվել է, որ չնայած ՍԷԿՏ համակարգում առանձին անձանց վերաբերյալ տրվում է հաղորդագրություն, որ ավելի քան 12 ամիս բացակայում է, սակայն այդ անձինք շարունակել են վճարվել բանկի կողմից և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով որոշ ժամանակահատված:

7. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Ռիսկային են գնահատվում օտարերկրյա քաղաքացիներին և երկքաղաքացիներին կատարված վճարումները, քանի որ վճարումներ ստացած որոշ անձանց տվյալները էլեկտրոնային կենսաթոշակի համակարգում նույնականացնելու արդյունքում պարզվել է, որ չնայած ՍԷԿՏ համակարգում տվյալ անձանց վերաբերյալ տրվում է հաղորդագրություն, որ ավելի քան 12 ամիս բացակայում է, սակայն այդ անձինք շարունակել են վճարվել բանկի կողմից և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով որոշ ժամանակահատված: Բոլոր այս դեպքերում կիրառվում է քաղաքացու կողմից հայտարարության հիման վրա իրավունքի ճանաչումը կամ դադարեցումը, ինչը մի շարք դեպքերում, առանց վարչական վերահսկման, գնահատվում է առավել ռիսկային: Նշված դեպքերում բանկային փոխանցման միջոցով վճարվել է 27,312.8 հազ. դրամ, իսկ Հայփոստի միջոցով կատարված վճարումները կազմում են 30,795.8 հազ. դրամ:

Առաջարկ

Օտարերկրյա քաղաքացիների և երկքաղաքացիների կենսաթոշակի իրավունքի իրացման և վճարումների հարցերի կանոնակարգման նպատակով պետք է հստակ սահմանել կենսաթոշակը այլ երկրում ստանալու փաստերի ճշտման նպատակով հարցումների անցկացման մեխանիզմ, որը հնարավորություն կտա առցանց ռեժիմում տվյալներ ստանալ երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում, օտարերկրյա քաղաքացուն այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն և Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում, Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց դեպքում:

Ղեկավարության արձագանք

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշման համաձայն՝ 2011 թվականի հունիսի 9-ից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանդիսանում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՍԷԿՏ համակարգ) օգտվող:

ՍԷԿՏ համակարգից ստացված տվյալները սոցիալական իրավունքների իրականացման ժամանակ կիրառելու պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ներառում են այն դեպքերը, երբ կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու և վճարելու համար պարտադիր պայման է Հայաստանի Հանրապետությունում գտնվելը): Առկա խնդիրների, տվյալների ստացման մեխանիզմների (տվյալների փոխանակության ենթահամակարգի) ձևավորման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտության մասին դեռևս 2017թ. օգոստոսի 7-ին N ԱԱ/ԱՂ/8208-17, ինչպես նաև 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N ՄԹ/ԱՄ-2/14607-18 գրություններով տեղեկացվել է Ազգային անվտանգության ծառայությանը: Բազմիցս կազմակերպվել են քննարկումներ Ծառայության մասնակցությամբ:

Ներկայումս կենսաթոշակների և այլ նպաստների կապակցությամբ տվյալների փոխանակությունը Ծառայության կողմից իրականացվում է՝ ՍԷԿՏ համակարգի հետ տվյալների փոխանակության համապատասխան ենթահամակարգի միջոցով:

Սակայն, ՍԷԿՏ համակարգից ստացվող տվյալների ծավալն ու բովանդակությունը բավարար չեն Ծառայության լիազորությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, մասնավորապես՝

- որոշակի ժամանակահատված (3 ամիս, 6 ամիս, 1 տարի) Հայաստանի Հանրապետությունից բացակայող կենսաթոշակառուների և նպաստառուների վերաբերյալ տեղեկատվության հետ Ծառայությանը չեն տրամադրվում Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու ամսաթվի վերաբերյալ տվյալներ,
- սահմանահատում իրականացնելու ամսաթվի վերաբերյալ տվյալները չեն ստացվում նաև այն դեպքում, երբ անհատական հարցումը կատարվում է սահմանահատում իրականացնելուց մեկ ամիս հետո,
- խնդիրներ են առաջանում նաև 18 տարին չլրացած երեխաների կողմից սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծառայությունում երեխան հաշվառվում է ծննդյան վկայականով, իսկ սահմանահատումը իրականացնում է անձնագրով,

- փաստացի սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվության կապակցությամբ խնդիրներ են առաջանում նաև այն դեպքում, երբ անձը Հայաստանի Հանրապետությունից ելք է կատարում ՀՀ քաղաքացու անձնագրով, իսկ մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ օտարերկրյա անձնագրով,
- գործնականում, հանդիպում են դեպքեր, երբ համաձայն ՍԷԿՏ համակարգի տվյալների, բացակայում է անձի՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու վերաբերյալ տվյալը, սակայն անձը փաստացի գտնվում է Հայաստանի Հանրապետությունում,
- ենթահամակարգը հնարավորություն չի տալիս նաև սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը որոնել անուն-ազգանունով, ինչը ևս խնդրահարույց է՝ հատկապես օտարերկրյա քաղաքացիների դեպքում,
- ենթահամակարգից պատասխանները ստացվում են համաձայն անձի ՀԾՀ տվյալների, իսկ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի առկայության դեպքում հարցմանն ի պատասխան տվյալներ չեն տրամադրվում: Այս դեպքում առաջարկվում է նույնականացնել նաև ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք ունեցող շահառուներին և Ծառայության հարցմանն ի պատասխան տրամադրել անձի սահմանահատման վերաբերյալ տեղեկատվությունը (օրը, ամիսը և տարին):

Արձանագրության 3-րդ կետում նշված դեպքերում, յուրաքանչյուր ամսվա կանխիկ վճարումներն ամփոփելուց հետո Ծառայության կողմից կատարվում է վճարված գործերի և ՍԷԿՏ համակարգով ՀՀ-ից բացակայող անձանց տվյալների համադրում՝ անձի ՀՀ-ում լինելու փաստը հաստատելու նպատակով: Քանի որ օտարերկրյա փաստաթղթով մուտք գործելու մասին տեղեկատվությունը, ինչպես նշել ենք վերը, ՍԷԿՏ համակարգով Ծառայությանը չի տրամադրվում, վճարված գործերով շահառուները ծանուցվում են, ներկայացնում են օտարերկրյա փաստաթուղթը և հայտարարություն այլ երկրում կենսաթոշակ չստանալու մասին, որից հետո սահմանված կարգով շարունակվում է նրանց կենսաթոշակ վճարելը:

Օրինակ, արձանագրությանը կից տրամադրած Out_Ot_Erk_BP.xlsx ցանկից նշվել է 1 օրինակ, որ անձը սահմանահատումն իրականացրել է ինչպես հայկական, այնպես էլ օտարերկրյա փաստաթղթով: Ուստի Ծառայության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, օտարերկրյա փաստաթուղթը կցվել է կենսաթոշակի էլեկտրոնային գործին և շարունակվել է վճարումը (վճարումն իրավաչափ է):

ՀՀ-ից բացակայող և կենսաթոշակի վճարման ցուցակներում ընդգրկված շահառուներին ոչ իրավաչափ վճարումները կանխարգելելու նպատակով, համաձայն Ծառայության պետի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N Ս/85 հրամանի, սահմանվել է հսկողություն:

Նախկինում, հսկողությունն իրականացվել է կանոնադրական գործառույթների շրջանակներում:

Մասնավորապես՝ յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաջորդ ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակները ձևավորելը, շահառուների տվյալները համադրվում են ՍԷԿՏ համակարգի, ՀՀ-ից բացակայող անձանց տեղեկատվության հետ, արդյունքում ՀՀ-ից բացակայող շահառուների մասով Ծառայության պետի տեղակալի համապատասխան հանձնարարականներով (կցվում է՝ handznararakan_bank.doc, handznararakan_post.doc), տարածքային բաժինների կողմից «Հայփոստ» ՓԲ ընկերության վճարման ցուցակներում կատարվում է ՉՎ նշագրում: Նշված գործերով շահառուների կենսաթոշակի հետագա վճարումն իրականացվում է բացառապես Ծառայության թույլտվությամբ: Ոչ իրավաչափ վճարումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվում հանցագործության վերաբերյալ Հաղորդում: Ներկայումս դատարանների վարույթներում են գտնվում հայցեր՝ նշված գումարները գանձելու վերաբերյալ: Այն է՝

Ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված «Քրեական գործերի վարույթները կարճելու կամ քրեական գործերի հարուցումները մերժելու մասին» որոշումների հիման վրա ՀՀ գլխավոր դատախազությունը հայցադիմումներ է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան «Հայփոստ» ՓԲ ընկերությունից 25,163.8 հազ. դրամ ընդհանուր գումարի բռնագանձման պահանջներով:

Մասնավորապես՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումներով վարույթ են ընդունվել հետևյալ քաղաքացիական գործերը.

1. Թիվ ԵԿԴ/1702/02/17 քաղաքացիական գործը՝ 9,799.8 հազ. դրամ գումար հայցապահանջով (ընթացիկ):
2. Թիվ ԵԿԴ/1750/02/17 քաղաքացիական գործը՝ 10,015.8 հազ. դրամ գումար հայցապահանջով (ընթացիկ):
3. Թիվ ԵԿԴ/3061/02/17 քաղաքացիական գործը՝ 2,164.8 հազ. դրամ գումար հայցապահանջով (ընթացիկ):
4. Թիվ ԵԿԴ/3058/02/17 քաղաքացիական գործը՝ 1,072.4 հազ. դրամ գումար հայցապահանջով (ընթացիկ):

Միաժամանակ, Ծառայության կողմից լրացուցիչ ներկայացված ցանկում նշված որոշումների հիման վրա կատարվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարուցված հայցադիմումի պահանջի լրացում՝ 2,110.9 հազ. դրամ գումարի չափով:

Ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկացվում է նաև «Հայփոստ» ՓԲ ընկերությանը: 2017թ-ի ընթացքում «Հայփոստ» ընկերության ղեկավարության հետ բազմիցս քննարկվել է վերը նշված խնդիրը: Նման համադրություն և գործընթաց է իրականացվում նաև անկանխիկ եղանակով վճարվող շահառուների մասով: Գրությունների միջոցով համապատասխան բանկերից պահանջվում են պարզաբանումներ (կցվում է՝ bank.xlsx անվանումով ֆայլ): Ուսումնասիրության արդյունքում ոչ իրավաչափ վճարումներ հայտնաբերելու դեպքում, դրանք հետ են գանձվում վճարող բանկից: Բացի այդ շահառուների կրկնակի կենսաթոշակ (ՀՀ, ԱՊՀ) ստանալու հանգամանքը ճշտելու (բացառելու) նպատակով, բոլոր այն գործերով, որոնցով առկա են երկքաղաքացիության, օտարերկրյա քաղաքացիության վերաբերյալ տեղեկատվություն տարածքային բաժինների միջոցով կատարվում են համապատասխան հարցումներ՝ ԱՊՀ երկրներ: Հարցումներ են կատարվում նաև Ծառայության ամփոփ վերլուծությունների և մոնիտորինգի վարչության կողմից: Այսպես օրինակ՝ մեկ հարցումը կարող է պարունակել շուրջ 100 շահառուի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դրանցից ԱՊՀ-ում կենսաթոշակառու կարող են հանդիսանալ միայն 5-ը: (օրինակը կցվում է՝ RD_Grutyun.doc ֆայլ):

8. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Չնայած պետական կենսաթոշակների էլեկտրոնային համակարգի գործունեությունը ըստ տեխնիկական առաջադրանքի և հետագա բարելավումների արդյունքների տեսանկյունից կայուն է, սակայն ներդրումների բացակայությունը, միջգերատեսչական տվյալների էլեկտրոնային շրջանառության հնարավորության սահմանափակումների պայմաններում դրա արդյունավետ գործունեությունը ռիսկային է դարձնում:

Առաջարկ

Նախատեսել և ապահովել պետական կենսաթոշակների էլեկտրոնային համակարգի շտեմարանների կառուցվածքային փոփոխություններ, ինչպես նաև ծրագրային ապահովման բարելավումներ՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսվող փոփոխությունները ամբողջությամբ արտացոլելու նպատակով:

Ղեկավարության արձագանք

Արձագանք չի ներկայացվել:

9. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Պետական կենսաթոշակային տեղեկատվական համակարգի շահառուների տվյալների և ԲՊՌ տվյալների բազայի համադրումների արդյունքում չեն նույնականացվել 133 անձի տվյալներ ըստ ՀԾՀ-ի:

ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված ԲՊՌ-ի տվյալների հիման վրա նախապատրաստվում է տվյալների բազա, որը հիմք է հանդիսանում համակարգում առկա շահառուների նույնականացումների և տեղաշարժերի համար, ինչը ավելացնում է տվյալների բազաների փոխգործակցման ընթացքում սուբյեկտիվ բացթողումների և սխալների հավանականության չափաբաժինը: Սա լրացուցիչ ռիսկեր է պարունակում համակարգի շահագործման և տվյալների նույնականացման հարցում: Այդ իսկ պատճառով, Պետական կենսաթոշակային տեղեկատվական համակարգի շահառուների տվյալների և ԲՊՌ տվյալների բազայի համադրումների արդյունքում չեն նույնականացվել 133 անձի տվյալներն ըստ Հանրային Ծառայությունների Համարանիշի:

Առաջարկ

Տվյալների միջգերատեսչական փոխանակումը պետք է իրականացվի առավել համակարգված և տվյալների բազմակողմանի վերլուծության համար համապատասխան ծրագրային միջոցներ կիրառելու և այդ միջոցները թափանցիկ կառավարելու միջոցով: Անհրաժեշտ է նաև, որ այդ ծրագրային միջոցները լինեն ինքնաշխատ, նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը տվյալների համադրման և սահմանափակումների կիրարկման ընթացքում:

Ղեկավարության արձագանք

Արձագանք չի ներկայացվել:

10. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Այլ գերատեսչությունների կողմից հավաքագրվող տեղեկատվությունը թերի է կամ անհասանելի:

Այլ գերատեսչությունների կողմից հավաքագրվող տեղեկատվությունը թերի է կամ անհասանելի: Մասնավորապես, Քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան բացակայում է, իսկ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացվող տվյալները ամբողջական չեն, և հիմնականում չեն պարունակում քաղաքացիների անհատական տվյալները, ինչն էլ անհնար է դարձնում գնահատել ռիսկերը:

Առաջարկ

Իրականացնել կենսաթոշակային համակարգում ընդգրկված բոլոր շահառուների կենսաթոշակի իրավունքի հաստատման, վճարումների կատարման համընդգրկուն գնահատում, այդ գործընթացներում անհրաժեշտ տվյալների առկայության, դրանց տեսքի, ծավալի, փոխանակման հնարավորությունների գնահատում, դրանց բացակայության դեպքում տալ հնարավոր ռիսկերի գնահատական և ներկայացնել առաջարկություններ այդ ռիսկերի հաղթահարման նպատակով:

Ղեկավարության արձագանք

Արձագանք չի ներկայացվել:

ՍԷԿՏ համակարգից ստացվող տվյալների ծավալն ու բովանդակությունը բավարար չեն Ծառայության լիազորությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

11. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՍԷԿՏ համակարգից ստացվող տվյալների ծավալն ու բովանդակությունը բավարար չեն Ծառայության լիազորությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, մասնավորապես՝

- որոշակի ժամանակահատված (3 ամիս, 6 ամիս, 1 տարի) Հայաստանի Հանրապետություն-նից բացակայող կենսաթոշակառուների և նպաստառուների վերաբերյալ տեղեկատվության հետ Ծառայությանը չեն տրամադրվում Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու ամսաթվի վերաբերյալ տվյալներ,
- սահմանահատում իրականացնելու ամսաթվի վերաբերյալ տվյալները չեն ստացվում նաև այն դեպքում, երբ անհատական հարցումը կատարվում է սահմանահատում իրականացնելուց մեկ ամիս հետո,
- փաստացի սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվության կապակցությամբ խնդիրներ են առաջանում նաև այն դեպքում, երբ անձը Հայաստանի Հանրապետությունից ելք է կատարում ՀՀ քաղաքացու անձնագրով, իսկ մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ օտարերկրյա անձնագրով,
- ենթահամակարգը հնարավորություն չի տալիս նաև սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը որոնել անուն-ազգանունով, ինչը ևս խնդրահարույց է՝ հատկապես օտարերկրյա քաղաքացիների դեպքում:

Արձանագրված ռիսկերի հետևանքով 2017 թվականի բոլոր ամիսների հարցումների արդյունքում «12 ամիս բացակայում է» կարգավիճակով անձանցից բանկերի միջոցով վճարվել է 702,651.2 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով՝ 619,099.1 հազ. դրամ: 3, 6 և 9 ամիս բացակայած շահառուներից 2017 թվականի ընթացքում բանկային վճարումներով ստացել են 9,014,537.7 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով՝ 4,023,370.2 հազ. դրամ:

Առաջարկ

Անհրաժեշտ է ներդնել համապատասխան հսկողական և մոնիտորինգի համակարգը, որով պարբերաբար համադրումներ կիրականացվեն ՍԷԿՏ համակարգի տվյալների և աշխատանքային կեսնաթոշակ ստացող շահառուների միջև, հայտնաբերելու և ուսումնասիրելու համար այն ռիսկային դեպքերը, երբ աշխատանքային կենսաթոշակի շահառուն պատշաճ կարգով չի ներկայացել վճարող համապատասխան կառույց համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան:

Ծառայության կողմից հնարավորին սեղմ ժամկետում իրականացնել՝

1. բանկերի միջոցով վճարված և ՍԷԿՏ համակարգի կողմից 2017թ. -ի ընթացքում 3-12 ամիս ժամանակահատվածով ՀՀ տարածքից բացակայող անձանց բանկ ներկայանալու ամսաթվերի և ՍԷԿՏ համակարգի կողմից սահմանը հատելու ամսաթվերի (դուրս գալու և մտնելու) համադրում,
2. Հայփոստի միջոցով վճարված և ՍԷԿՏ համակարգի կողմից 2017թ. -ի ընթացքում 3-12 ամիս ժամանակահատվածով ՀՀ տարածքից բացակայող անձանց վճարումների ստացման ժամկետների և ՍԷԿՏ համակարգի կողմից սահմանը հատելու ամսաթվերի (դուրս գալու և մտնելու) համադրում:

Բացի այդ, անհրաժեշտ է կենսաթոշակների վճարման պայմանագիր կնքած բանկերի հետ համատեղ մշակել և ներդնել կենսաթոշակառուների նույնականացման միջոցներ, այդ թվում անձանց մատնահետքերով նույնականացումը:

Ղեկավարության արձագանք

ՍԷԿՏ համակարգի տվյալների և «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի շահառուների համադրման համար ՍԷԿՏ համակարգի հետ տվյալների փոխանակության համապատասխան ենթահամակարգում ներառվում են ոչ միայն կենսաթոշակ ստացող անձանց տվյալները, այլև՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգում առկա բոլոր շահառուների՝ կենսաթոշակ, ծերության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ, հաշմանդամության նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև երկու

տարեկան երեխայի խնամքի նպաստ, մայրության նպաստ ստացող անձանց տվյալները: Ուստի քանակները զգալիորեն տարբերվում են կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց քանակից:

Երկու համակարգերում էլ պահպանվում են բոլոր շահառուների վերաբերյալ առկա տվյալները, իսկ «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգում՝ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերը տարանջատվում եմ «Պետական կենսաթոշակների մասին» և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքներով սահմանված դադարեցման հիմքերով:

Արձանագրության մեջ նշված՝ երկու դեպքերի վերաբերյալ կենսաթոշակի գործում 13.02.2017թ.-ին մուտքագրված են թաղման նպաստի (դիմում 018-0965240) և կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի վճարման (դիմում 018-0965651) վերաբերյալ դիմումներ: Թաղման նպաստի վճարման դիմումին կցված մահվան վկայականի համաձայն (VI ИК 784764) շահառուն մահացել է 05.02.2017թ. ՌԴ-ում: Կենսաթոշակ վճարելը դադարեցված է եղել 01.10.2015թ.-ից՝ շահառուի կողմից վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա ընթացքում բանկ չներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն չստորագրելու հիմքով, իսկ 01.03.2017թ.-ից դադարեցվել է նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակառուի մահվան հիմքով (համապատասխան տեղեկատվությունը տրամադրվել է canker01072018.accdb անվանումով ֆայլի cank_toshak աղյուսակում): Երկրորդ կենսաթոշակի գործում 12.07.2016թ.-ին մուտքագրված են թաղման նպաստի (դիմում 080-0839652) և 13.07.2016թ.-ին՝ կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի վճարման (դիմում 080-0840130) վերաբերյալ դիմումներ: Թաղման նպաստի վճարման դիմումին կցված մահվան վկայականի համաձայն (VII МЮ 668897) շահառուն մահացել է 04.07.2016թ. ՌԴ-ում: Կենսաթոշակ վճարելը դադարեցված է եղել 01.06.2015թ.-ից՝ շահառուի կողմից վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա ընթացքում բանկ չներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն չստորագրելու հիմքով, իսկ 01.08.2016թ.-ից դադարեցվել է նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակառուի մահվան հիմքով (համապատասխան տեղեկատվությունը տրամադրվել է canker01072018.accdb անվանումով ֆայլի cank_toshak աղյուսակում):

Միաժամանակ հայտնում եմ, որ Ծառայության N ԱԲ/ԱգԱ/29919-18 գրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ուղարկվել Ազգային Անվտանգության ծառայությանը հասցեագրված գրությունը՝ *Հաշվեքննիչ պալատի կողմից ձևավորված ցանկում նշված անձանց՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանի*

Հանրապետության սահմանը հատելու (մուտքի և ելքի) օրվա, ամսվա վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու վերաբերյալ:

Բացակայում է բյուջետային ցուցանիշների պլանավորման և կանխատեսումների հաշվարկման (ակտուարական) հաստատված մեթոդաբանությունը:

12. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Բացակայում է բյուջետային ցուցանիշների պլանավորման և կանխատեսումների հաշվարկման (ակտուարական) հաստատված մեթոդաբանությունը, որի արդյունքում.

- աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի ծրագրային ցուցանիշների շարունակաբար ավելացումը հանգեցրել է նրան, որ 2016թ.-ին առաջացել են 1,232,132.2 հազ. դրամ, իսկ 2017 թվականին՝ 2,727,539.0 հազ. դրամ բյուջետային ազատ միջոցներ,
- 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտով 20575 աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցողների կրճատումը, որը պետք է բերեր շուրջ 9.0 մլրդ դրամի խնայողության, իրականում տեղի չի ունեցել և բացակայում են այդ կրճատման կոնկրետ շահառուների ցանկերը,
- Տեղի չի ունեցել նաև աշխատանքային ստաժի տևողության կրճատում, որի արդյունքում պետք է խնայվեր շուրջ 3.0 մլրդ դրամ՝ շուրջ 350.000 տարի աշխատանքային ստաժի հաշվարկման դեպքերի նվազեցմամբ պայմանավորված:

Առաջարկ

Մշակել և հաստատել ՀՀ պետական բյուջեի պլանավորման հստակ ցուցանիշներ և հաշվարկման մեթոդաբանություն, այդ թվում հիմնված կանխատեսելի (ակտուարական) հաշվարկների վրա:

Ղեկավարության արձագանք

Ինչպես հայտնել ենք նախորդիվ՝ Հաշվեքննիչ պալատին ուղղված 2018 թվականի նոյեմբերի 22-ի N ԱԲ/ԿԲ-1/28093-18 գրությամբ, Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի ծախսերի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ թե փաստացի դրամական վճար ստացողների թվաքանակը, այլ՝ դրամական վճարներ (կենսաթոշակ, նպաստ և այլն) ստանալու իրավունք ունեցող անձանց թվաքանակի վերաբերյալ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվությունը: Միաժամանակ հայտնում եմ, որ պլանավորված և փաստացի վճարված գումարների տարբերությունն ամբողջությամբ տնօրինում է պետական բյուջեն:

2018թ. բյուջեով նախատեսվում էր իրականացնել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում հաշվառված՝ աշխատանքային կենսաթոշակի իրավունք ստացած անձանց կրճատում (14087 շահառու)՝ հաշմանդամության սահմանման չափորոշիչների խստացման, կրկնակի կենսաթոշակ ստացողների բացահայտման և նրանց կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու, աշխատանքային ստաժերի գույքագրմամբ՝ ստաժերի միջինացված տևողության կրճատմանն ուղղված միջոցառումների արդյունքում: Հարկ է նկատի ունենալ, որ Ծառայության իրավասություններից բխող, վերը նշված միջոցառումներն իրականացվել են վարչարարության խստացման միջոցով, ինչը չի ենթադրել իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Սակայն ընթացիկ տարվա ընթացում կանխատեսվող թվաքանակի և չհիմնավորված փաստաթղթերի հիման վրա աշխատանքային ստաժի հաշվարկման կապակցությամբ առկա ռիսկերի նվազեցումը նախատեսված չափով չիրականացավ, որի արդյունքում անհրաժեշտություն առաջացավ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին Ծառայության միջոցով իրականացվող մի շարք ծրագրերի գծով կատարել վերաբաշխում: Նշվածի արդյունքում՝ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1314-Ն որոշման համաձայն՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Ծառայությանը հատկացվեց 6,626,516.1 հազար դրամ գումար, այդ թվում՝ «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ», «Աշխատանքային կենսաթոշակներ», «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ», «ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ», «Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճար», «Մայրության նպաստի վճարում», «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ», և այլ ծրագրերի գծով:

«Հայփոստ» ՓԲԸ-ին միջնորդավճար է տրամադրվել վճարված կենսաթոշակի գումարի 1%-ի չափով՝ առանց համապատասխան հաշվարկ-հիմնավորման

13. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ին միջնորդավճար է տրամադրվել վճարված կենսաթոշակի գումարի 1%-ի չափով՝ առանց համապատասխան հաշվարկ-հիմնավորման: Արդյունքում, «Հայփոստ» ՓԲ ընկերությանը մեկ կենսաթոշակառուի համար մատուցված ծառայությունների դիմաց պետ. բյուջեի միջոցների հաշվին

կատարված վճարումները 12.7 անգամ ավելի ծախսատար են եղել (1,506,499.6 հազ. դրամ), քան բանկերի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումները (80,544.0 հազ. դրամ):

Առաջարկ

Ուսումնասիրել շահառուներին բանկերի միջոցով վճարումների հնարավորությունը՝ ըստ տարածաշրջաններում բանկային ծառայությունների բաշխվածության:

Ղեկավարության արձագանք

Արձագանք չի ներկայացվել:

14. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

2017թ. -ի ընթացքում Մոնիթորինգի վարչության կողմից չի կատարվել Ծառայության որևէ տարածքային ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների ամբողջական վերլուծություն և գնահատում

2017թ-ի ընթացքում Մոնիթորինգի վարչության կողմից չի կատարվել Ծառայության որևէ տարածքային ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների ամբողջական վերլուծություն և գնահատում, ինչպես նաև ստուգումներ չեն կատարվել վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում («Հայփոստ» և բանկեր): Մինչդեռ, ըստ կանոնադրության 11-րդ կետի, վարչության հիմնական խնդիրներն են՝ վերլուծությունների և մոնիթորինգի միջոցով տարածքային ստորաբաժանումների աշխատանքների ամբողջական գնահատումը և մոնիթորինգի իրականացումը նաև վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Բացի դա, մոնիթորինգի վարչության կանոնադրության 4-րդ գլխի 7-րդ կետով սահմանված է, որ վարչությունը ուսումնասիրում, վերլուծում է կենսաթոշակների և նպաստների վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ կազմված փոխադարձ ակտերում առկա տեղեկատվությունը և դրա նկատմամբ իրականացնում է մոնիթորինգ, սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մոնիթորինգի վարչության կողմից ստուգվող ժամանակահատվածում փոխադարձ ակտերի տեղեկատվության վերլուծություն և մոնիթորինգ չի իրականացվել:

Առաջարկ

Ծառայության տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների

ամբողջական վերլուծություն և գնահատում կատարելու նպատակով մոնիտորինգի վարչության աշխատանքային ծրագրում ներառել ստուգումների իրականացման պլան-ժամանակացույց՝ հիմնված ռիսկերի գնահատման հստակ մեթոդաբանության վրա:

Ղեկավարության արձագանք

Արձագանք չի ներկայացվել:

15. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

6 պայմանագրերի համար չի ապահովվել իրավունքի պետական գրանցման պահանջը

2017 թվականին Ծառայության 54 ստորաբաժանումներից 24-ը տեղակայվել են վարձակալված տարածքներում: Վարձակալության պայմանագրերի փաստաթղթային ուսումնասիրությունից պարզվել է, որ վարձակալության 6 պայմանագրերի համար չի ապահովվել ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև վերոնշյալ պայմանագրերով սահմանված իրավունքի պետական գրանցման պահանջը:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցներ Ծառայության կողմից վարձակալության հիմունքներով շահագործվող ոչ բնակելի տարածքների օգտագործումն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու, ինչպես նաև իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ պլանավորելու ուղղությամբ:

Ղեկավարության արձագանք

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով անորոշ ժամկետով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն՝ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի այլ գույքային իրավունքների պետական գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հիմք են օրենքով նման իրավունքի դադարման համար նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը:

Այսինքն, եթե կողմերի միջև չի կնքվում համաձայնություն՝ նոտարական կարգով վավերացված վարձակալության պայմանագրի ժամկետը երկարացնելու վերաբերյալ, ապա վարձակալության պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով

անորոշ ժամկետով, իսկ իրավունքները համարվում են գրանցված մինչև այն պահը, քանի դեռ գրանցված իրավունքները չեղարկելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում չի ներկայացվել:

1. Ծառայության Եղեգնաձորի, Ավանի և Նոր-Նորքի տարածքային ստորաբաժանումների գործունեության իրականացման ապահովման համար վարձակալած և նոտարական կարգով վավերացված պայմանագրերի գործողության ժամկետի ավարտից հետո պայմանագրային հարաբերությունները շարունակվել են և չի կնքվել համաձայնություն՝ դրանց գործողությունը երկարացնելու վերաբերյալ: Ըստ այդմ՝ վերը նշված կարգավորումների ուժով, նախորդիվ կնքված պայմանագրերը ճանաչվում են վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով՝ իսկ իրավունքները համարվում են գրանցված մինչև այն պահը, քանի դեռ գրանցված իրավունքները չեղարկելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում չի ներկայացվել:
2. Ծառայության Գավառի տարածքային ստորաբաժանման գործունեության իրականացման ապահովման համար նախկինում «Արա-Նանե» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագիրը լուծվել է, և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2018 թվականի հունվարի 9-ի տեղեկանքի համաձայն՝ դադարեցվել է «Արա-Նանե» ՍՊ ընկերության և Ծառայության միջև 04.09.2006 թվականին կնքված պայամանագրով գրանցված վարձակալության իրավունքի գրանցումը, ուժը կորցրած է ճանաչվել վարձակալության իրավունքի գրանցման թիվ 2143800 վկայականը (կցվում է):
3. Ծառայության Արաբկիրի տարածքային բաժնի գործունեության իրականացման ապահովման նպատակով՝ 2018 թվականի մարտի 13-ին «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲ ընկերության հետ կնքվել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում:
4. ք. Սպիտակ, Խնկոյան 30 հասցեում գտնվող տարածքի վարձակալության հետ կապված փաստաթղթերն արխիվացված են: Ծառայության Սպիտակի տարածքային բաժնի գործունեության իրականացման ապահովման նպատակով՝ 2018 թվականի հունիսի 4-ին կնքվել է բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր (ք. Սպիտակ, Ոփյան 54), որից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում:

Քաղաքացի Լ.Մրրիկյանի հետ կնքված վարձակալության պայմանագիրը լուծվել է 2017 թվականի դեկտեմբերի 25-ին և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2018 թվականի հունվարի 8-ի տեղեկանքի համաձայն՝ Լ.Մրրիկյանի և Ծառայության

միջև 23.09.2011 թվականի թիվ 2788 պայմանագրով գրանցված վարձակալության իրավունքը դադարեցվել է 25.12.2017թ. թիվ 3328 համաձայնագրի հիման վրա:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ

Նպաստառուների միջին ամսական թվաքանակը կազմել է 107529

Տարեկան ճշտված ծրագիրը Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների մասով կազմել է 36,988,912.7 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 36,752,295.2 հազ. դրամ, նպաստառուների միջին ամսական թվաքանակը կազմել է 107529: Ծրագիրը ընդգրկվել է ՍԱՊԾ-ի ֆինանսական ցուցանիշերում 2017 թվականից:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ նշված ծրագրի շահառուների կազմի որոշումը և վճարումներն իրականացվում է ՀՀ մարզպետարանների և Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների աշխատակազմերի ենթակայության թվով 55 սոցիալական աջակցության տարածքային մարմինների /այսուհետ՝ ՍԱՏՄ/ կողմից: ՀՀ կառավարության 30.01.2018 թ. թիվ 145-Ն որոշմամբ հաստատված 13-րդ հավելվածով սահմանված «Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության վճարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից միջոցների հատկացման» կարգի 2-րդ կետի համաձայն ՍԱՏՄ–ները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են տրամադրում տեղեկատվություն նպաստառու ընտանիքների, անձանց և նրանց նպաստի չափի մասին տեղեկատվություն, որոնց հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կազմում է նպաստների ֆինանսական միջոցների մասին հայտ-պահանջագրերն ու դրանք ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարություն: Իսկ, քանի որ 2017 թվականից նշված ծրագիրն ընդգրկվել է Ծառայության ֆինանսական ցուցանիշերում, հայտ-պահանջագրերը նախարարությունը ներկայացնում է Ծառայություն: Ծառայություն ներկայացված հայտ-պահանջագրերի հիման վրա ընդամենը կատարում է փոխանցումներ ՀՀ ֆինանսների նախարարությունում սոցիալական աջակցության տարածքային մարմինների համար բացված գանձապետական հաշիվներին: Ծառայությունը որևէ հսկողական գործառույթ չի իրականացնում ծախսված գումարների օրինականության և արդյունավետության նկատմամբ: Մինչդեռ, դրանց տրամադրման հետ առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի և «Նորք

սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից:

Հաշվեքննության ընթացքում արձանագրվել են անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ռիսկեր, մասնավորապես՝

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

ՀՀ կառավարության 30.01.2014 թվականի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու /փաստագրվելու/ կարգի» 51-րդ կետի համաձայն, «Եթե հաշվառվելուց կամ փաստագրվելուց հետո 12 ամսվա ընթացքում ընտանիքի կազմում, ընտանիքին, ընտանիքի որևէ անդամին վերաբերող տվյալներում կատարվել են փոփոխություններ, ապա դիմողը 30 օրվա ընթացքում ներկայացնում է դրանք հավաստող փաստաթղթերը»: Նույն որոշմամբ հաստատված «Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու /փաստագրվելու/ համար դիմում հայտարարագրի» 2-րդ կետով դիմումատուն պարտավորվում է ընտանիքի կազմի, եկամուտների և այլ փոփոխությունների դեպքում մեկամսյա ժամկետում տեղյակ պահել սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը /բաժնին/՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, 4-րդ կետով նշվում է, որ «տեղեկացված եմ, որ ընտանիքիս մասին ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու կամ դրանք թաքցնելու պատճառով ավելի վճարված գումարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ է գանձվում»:

Նպաստառու հանդիսացող որոշ շահառուներ որոշակի բնակության հասցեում չեն սպառել կամ չնչին ծավալով են սպառել էլեկտրաէներգիա կամ գազ, սակայն ստացել են Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ, ընդհանուր առմամբ 824,436.0 հազ. դրամ գումարի չափով:

Հաշվեքննողը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված նպաստի շահառուների ցանկը համադրել է «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ից և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ից ստացված բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման տվյալների հետ: Համադրման արդյունքում պարզվել է, որ նպաստառու հանդիսացող շահառուները ուսումնասիրվող ժամանակաշրջանում որոշակի բնակության հասցեում չեն սպառել կամ չնչին ծավալով են սպառել էլեկտրաէներգիա կամ գազ, սակայն ստացել են Ընտանիքի

կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ, ընդհանուր առմամբ **824,436.0 հազ. դրամ գումարով**:

Գոյություն ունի ռիսկ, որ թվով 3891 նպաստառու ընտանիք 55 ՍԱՏՄ-ներում փոխել են իրենց բնակության վայրը և այդ մասին պատշաճ կերպով չեն տեղեկացրել ՍԱՏՄ-ներին:

Գոյություն ունի ռիսկ, որ թվով 3891 նպաստառու ընտանիք 55 ՍԱՏՄ-ներում փոխել են իրենց բնակության վայրը և այդ մասին պատշաճ կերպով չեն տեղեկացրել ՍԱՏՄ-ներին, որն իր արտացոլումը չի գտել սոցանձնագրերում: Նշված հանգամանքը նպաստի վճարումը դադարեցնելու հիմք է հանդիսանում:

Մասնավորապես՝

- 21 ՍԱՏՄ-ներում 2017 թվականի ընթացքում 12 ամիս անընդմեջ էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող նպաստառու 73ընտանիքները էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառում ընդհանրապես չունեն: **Արդյունքում նշված նպաստառու ընտանիքների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 22,886.5 հազ. դրամի չափով:**
- Բնական գազի բաժանորդ չհանդիսացող 2625 նպաստառու ընտանիք՝ 55 ՍԱՏՄ-ներում, 2017 թվականի ընթացքում 3 և ավելի ամիսներ էլեկտրաէներգիայի ծախս ընդհանրապես չեն ունեցել; **Արդյունքում, նշված նպաստառու ընտանիքների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 599,730.5 հազ. դրամի չափով:**
- Նույն ամիս /3 և ավելի ամիսներ/ և էլեկտրաէներգիայի և բնական գազի 0-ական ծախս ունեն 863 նպաստառու ընտանիք՝ 52 ՍԱՏՄ-ներում: **Արդյունքում, նշված նպաստառու ընտանիքների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 153,782.5 հազ. դրամի չափով:**
- Բնական գազի բաժանորդ չհանդիսացող 330 նպաստառու ընտանիք՝ 51 ՍԱՏՄ-ներում, 2017 թվականի ընթացքում 3 և ավելի ամիսներ էլեկտրաէներգիայի աննշան ծախս են ունեցել /ընդամենը 0-10 կվ/; **Արդյունքում, նշված նպաստառու ընտանիքների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 48,036,5 հազ. դրամի չափով:**

Առաջարկ

Քանի որ, նշված ծրագրին առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության կողմից, առաջարկվում է նախարարությանը, հնարավոր ռիսկերի հայտնաբերման նպատակով պարբերաբար կատարել նշված համադրումները և դրանք տրամադրել ՍԱՏՄ-ներին՝ ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով, ինչպես նաև ներդնել հսկողական համակարգ համադրման արդյունքների կիրառման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Ղեկավարության արձագանք

Նախարարության կողմից ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ տեղեկացվել է, որ արձանագրությամբ ներկայացված առաջարկությունների շուրջ իրականացվելիք աշխատանքները կգտնվեն նախարարության մշտական հսկողության տակ:

Ի հայտ է եկել անհամապատասխանության 2453 դեպք /ընդամենը 796,625.5 հազ. դրամ/, որոնք ճշտման և պարզաբանման կարիք ունեն

2. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով որպես «արտաքին հաստատում» ստացված տեղեկատվական բազաների և «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի շահառուների մասով տեղեկատվական համակարգի անհրաժեշտ տվյալների համադրման արդյունքում ի հայտ է եկել անհամապատասխանության **2453 դեպք՝ /ընդամենը 796,625.5 հազ. դրամ**/, որոնք ճշտման և պարզաբանման կարիք ունեն:

Արդյունքում, տվյալ շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 796,625.5 հազ. դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթները նշված դեպքերի ճշտման և պարզաբանման նպատակով, Հաշվեքննիչ պալատի նախագահի 30.11.2018թ. թիվ ՀՊԵ-274 գրությամբ հայցել ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին հնարավոր սեղմ ժամկետում ըստ էության ուսումնասիրել վերոնշված խնդիրներն ու ներկայացնել հանգամանալից ճշգրտված տեղեկատվություն՝ հաշվեքննության արդյունքներում ընդգրկելու նպատակով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 13.12.2018թ թիվ ԱԱՄ/ԱՄ-1-2/19755-18 պատասխան գրությամբ նշվում է, որ նշված խնդիրների վերաբերյալ հանգամանալից ճշգրտված տեղեկատվություն և պարզաբանում ստանալու նպատակով գրությունը և դրան կից ցուցակներն ուղարկվել են ՀՀ մարզպետներին և

քաղաքապետերին: Այն Հաշվեքննիչ պալատ կներկայացվի սոցիալական աջակցության տարածքային մարմիններից համապատասխան տեղեկատվություն ստանալուց և ամփոփելուց հետո: Մասնավորապես, այն իր մեջ ներառում է՝

2.1 Ա34՝ ամուսնալուծված ընտանիքի երեխա և Մ45՝ միայնակ մոր երեխա, ծածկագրեր.

Համադրումները կատարվել է 55 սոցիալական աջակցության տարածքային մարմինների անապահովության տեղեկատվական բազայի (31.12.2017 թ.-ի ՏԲ) և ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման տեղեկատվական բազաների (Ամուսնություն 2000-2018թթ., Ամուսնալուծություն 2015-2018թթ.) միջև:

Առանձնացվել են 2160 ընտանիք, 2017թ.-ի ընթացքում 735,868.0 հազ. դրամ վճարված գումարով, որտեղ առկա են՝

- Ամուսնություն գրանցած անձի հետ 02 /աղջիկը/ և /կամ/ 03 /տղան/ ազգակցական կապի ծածկագրով առնվազն մեկ անձ՝ որին ամրագրված է Ա34 կամ Մ45 ծածկագիրը:
- Ընտանիքի գլխավորի նկատմամբ 02 /աղջիկը/, 03/ տղան/, 06 /քույրը/, և /կամ/ 07 /եղբայրը/ ազգակցական կապ ունեցող համադրված անձը կատարել է ամուսնության գրանցում և այդ նույն ընտանիքում, գլխավորի նկատմամբ 12 /թոռը/ և /կամ/ 17 /այլ/ ազգակցական կապի ծածկագրով առնվազն մեկ անձ՝ որին ամրագրված է Ա34 կամ Մ45 ծածկագիրը:

2.2 Մ45 ծածկագիր՝ միայնակ մոր երեխա ծածկագիր.

Կատարվել է համադրում 55 սոցիալական աջակցության տարածքային մարմիններում հաշվառված անապահովության տեղեկատվական բազայի (31.12.2017թ.-ի ՏԲ) և ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման տեղեկատվական բազաների (հայրության ճանաչում 2015-2018թթ.,) միջև:

Առանձնացվել են թվով 24 ընտանիք, 2017թ.-ի ընթացքում 5,233.5 հազ. դրամ վճարված, որոնցում առկա Մ45 ծածկագրով ամրագրված անչափահասների նկատմամբ գրանցվել է հայրության ճանաչում:

2.3 Կ87 ծածկագիր՝ միայնակ կենսաթոշակառու.

Կատարվել է համադրում 55 սոցիալական աջակցության տարածքային մարմիններում հաշվառված անապահովության տեղեկատվական բազայի (31.12.2017թ.-ի ՏԲ) և Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի (01.07.2018թ.-ի ՏԲ)

միջև: **Առանձնացվել են թվով 269 ընտանիք, 2017թ.-ի ընթացքում 55,524.0 հազ. դրամ վճարված, որոնցում առկա Կ87 ծածկագրով ամրագրված անձանց վերաբերյալ կենսաթոշակային ապահովության տեղեկատվական բազայում, կենսաթոշակի նշանակման ժամանակ երեխա ունենալու հանգամանքը արտացոլված է ստաժի մեջ:**

Առաջարկ

Քանի որ, նշված ծրագրին առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Նախարարությանն առաջարկվում է հնարավոր ռիսկերի հայտնաբերման նպատակով պարբերաբար կատարել նշված համադրումները և դրանք տրամադրել ՍԱՏՄ-ներին՝ ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով, ինչպես նաև ներդնել հսկողական համակարգ համադրման արդյունքների կիրառման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

Ղեկավարության արձագանք

Նախարարության կողմից ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ տեղեկացվել է, որ արձանագրությամբ ներկայացված առաջարկությունների շուրջ իրականացվելիք աշխատանքները կգտնվեն նախարարության մշտական հսկողության տակ:

3. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննողի կողմից կատարվել է ՍԱՏՄ-ներին 2017 թվականին տրամադրված հարակից բազաների համադրման արդյունքների վերլուծություն: Մասնավորապես համադրվել են անշարժ գույքի առքուվաճառքի, նվիրատվությունների, տրանսպորտային միջոցների առկայության և ձեռքբերումների, մաքսային վճարումների և բնական գազի գերածախսի վերաբերյալ ստացված տեղեկատվության և այդ գործարքները իրականացրած նպաստառու ընտանիքներին վճարած նպաստները /առանց բացակա և հարգելի բացակա անդամի մասով/: Անհրաժեշտ է նշել, որ հարակից բազաների համադրման արդյունքները նախարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում է ՍԱՏՄ-ներին, որոնք էլ համապատասխան ուսումնասիրություններ

Նպաստի վճարումները շարունակելու վերաբերյալ համակարգող խորհուրդների որոշումների կայացման որևէ չափորոշիչներ, ուղեցույցներ կամ որևէ մեթոդական կարգավորումներ չկան, որը կարող է սուբյեկտիվ մոտեցումների պատճառ հանդիսանալ:

կատարելուց հետո կամ դադարեցնում են նպաստի հետագա վճարումները կամ ներկայացնում են համակարգող խորհուրդ՝ նպաստի վճարումները շարունակելու որոշումներ կայացնելու նպատակով:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ նպաստի վճարումները շարունակելու վերաբերյալ համակարգող խորհուրդների որոշումների կայացման որևէ չափորոշիչներ, ուղեցույցներ կամ որևէ մեթոդական կարգավորումներ չկան, որը կարող է սուբյեկտիվ մոտեցումների պատճառ հանդիսանալ: Նույնը կարելի է ասել նաև ՍԱՏՄ-ների կողմից դադարեցումների վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Մասնավորապես՝

- Պարզվեց, որ 1623 նպաստառու ընտանիքներ կատարել են անշարժ գույքի առքուվաճառքի և նվիրատվության գործարքներ՝ գործարքից հետո վճարված գումարը կազմել է 332,469.5 հազ. դրամ, որից առքուվաճառք՝ 713 ընտանիք՝ 127,826.5 հազ. դրամ վճարած գումարով, ձեռք բերված գույքի ընդհանուր արժեքը կազմել է 3,203,705.4 հազ. դրամ, նվիրատվություն՝ 910 ընտանիք՝ 204,643.0 հազ. դրամ: **Արդյունքում, 1623 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 332,469.5 հազ. դրամի չափով:**
- 558 նպաստառու ընտանիքներ 2016-2017 թվականների ընթացքում գրանցել են ավտոտրանսպորտային միջոցներ, գործարքից հետո վճարված գումարը կազմել է 66,497.5 հազ. դրամ: **Արդյունքում, 558 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 66,497.5 հազ. դրամի չափով:**
- 225 նպաստառու ընտանիքներ կատարել են մաքսային վճարումներ՝ 34,209.0 հազ. դրամի, վճարված նպաստի գումարը՝ 20,257.0 հազ. դրամ: **Արդյունքում, 225 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 20,257.0 հազ. դրամի չափով:**
- 27399 նպաստառու ընտանիքներ ունեցել են բնական գազի գերածախս, որից 1000 և ավել ԽՄ գերածախս են ունեցել 2656 ընտանիք:

Կատարվել է համադրում հարակից բազաների համադրված արդյունքների միջև: Արդյունքում առկա են հետևյալ համընկնումները՝

- 11 նպաստառու ընտանիք միաժամանակ կատարել են առուվաճառքների և նվիրատվությունների գործարքներ, ինչպես նաև ձեռք են բերել ավտոտրանսպորտային միջոցներ, նպաստի վճարված գումարը կազմել է 3,318.0 հազ. դրամ: Ընդ որում, 7 ընտանիքի մասով անշարժ գույքի գնման գինը կազմել է

19,262.0 հազ. դրամ: **Արդյունքում, 11 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 3,318.0 հազ. դրամի չափով:**

- 10 նպաստառու ընտանիք միաժամանակ ձեռք են բերել ավտոտրանսպորտային միջոցներ և կատարել են մաքսային վճարում՝ 3,080.0 հազ. դրամի: Նպաստի վճարած գումարը կազմել է 707.5 հազ. դրամ: **Արդյունքում, 10 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 3,080.0 հազ. դրամի չափով:**
- 387 նպաստառու ընտանիք միաժամանակ կատարել են անշարժ գույքի առքուվաճառքի և նվիրատվության գործարքներ և ունեցել են գազի գերածախսեր, նպաստի վճարած գումարը կազմել է 84,086.0 հազ. դրամ: Ընդ որում, գազի գերածախսի 1000 և ավելի ԽՄ-ի դեպքերի համադրմամբ ընտանիքների թիվը կկազմի 49, նպաստի վճարած գումարը կկազմի 9,485.5 հազ. դրամ: **Արդյունքում, 387 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 84,086.0 հազ. դրամի չափով:**
- 76 նպաստառու ընտանիք միաժամանակ ձեռք են բերել ավտոտրանսպորտային միջոցներ և ունեցել են գազի գերածախսեր, նպաստի վճարած գումարը կազմել է 11,003.0 հազ. դրամ: Ընդ որում, գազի գերածախսի 1000 և ավելի ԽՄ-ի դեպքերի համադրմամբ ընտանիքների թիվը կկազմի 9, նպաստի վճարած գումարը կկազմի 1,303.0 հազ. դրամ: **Արդյունքում, 76 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 11,003.0 հազ. դրամի չափով:**

Առաջարկ

Քանի որ, նշված ծրագրին առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, հաշվեքննողի կողմից առաջարկվում է մշակել խորհուրդների որոշումների կայացման, ինչպես նաև ՍԱՏՄ կողմից նպաստների վճարումները դադարեցնելու վերաբերյալ չափորոշիչներ, ուղեցույցներ կամ մեթոդական կարգավորումներ, որոնք միասնական կլինեն նպաստի վճարումը շարունակելու կամ դադարեցնելու մասին որոշում ընդունելիս:

Ղեկավարության արձագանք

Նախարարության կողմից ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ տեղեկացվել է, որ արձանագրությամբ ներկայացված առաջարկությունների շուրջ իրականացվելիք աշխատանքները կգտնվեն նախարարության մշտական հսկողության տակ:

4. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Առկա է ռիսկ, որ հարակից բազաների հետ համադրված մասով վճարված գումարների հետգանձումներ կարող են կատարված չլինել ընդհանուր առմամբ 215,446 հազար ՀՀ դրամի չափով:

Կատարվել է համադրում 2017 թվականի վճարման տեղեկատվական բազայի և 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի միջև: Արդյունքում պարզվել է, որ 21898 նպաստառու ընտանիքների գործեր 2017 թվականի ընթացքում ճանաչվել են անվավեր, որոնց 2017 թվականի ընթացքում վճարվել է 4,728,163.5 հազ. դրամ նպաստ: Նշված 21898 գործեր համադրվել են 2017 թվականի ընթացքում ՍԱՏՄ-ներին տրամադրված հարակից բազաների տվյալների հետ: Ենթադրվում է, որ համադրված մասով նպաստի գործերը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցումների փոխարեն անվավեր են ճանաչվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անվավեր ճանաչված գործերը հանվում են անապահովության գնահատման համակարգի ընթացիկ տեղեկատվական բազաներից՝ առկա է ռիսկ, որ հարակից բազաների հետ համադրված մասով վճարված գումարների հետգանձումներ կարող են կատարված չլինել ընդհանուր առմամբ 215,446 հազար ՀՀ դրամի չափով:

Պարզվել է, որ՝

- Անվավեր ճանաչված գործերից 407 ընտանիքի մասին ստացվել է տեղեկատվություն անշարժ գույքի գործարքների վերաբերյալ, վճարված գումարը կազմել է 57,137.5 հազ. դրամ: **Արդյունքում, 407 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 57,137.5 հազ. դրամի չափով:**
- Անվավեր ճանաչված գործերից 998 ընտանիքի մասին ստացվել է տեղեկատվություն ավտոմեքենաների ձեռքբերումների և առկայության մասին՝ վճարված գումարը կազմում է 154,622.0 հազ. դրամ, այդ թվում 417 ընտանիք ձեռք են բերել ավտոմեքենաներ՝ վճարված գումարը կազմում է 43,278.0 հազ. դրամ: **Արդյունքում, 998 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 154,622.0 հազ. դրամի չափով:**
- Անվավեր ճանաչված գործերից 38 ընտանիքի մասին ստացվել է տեղեկատվություն մաքսային վճարումների վերաբերյալ՝ վճարված գումարը կազմում է 3,686.5 հազ. դրամ: **Արդյունքում, 38 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 3,686.5 հազ. դրամի չափով: Հատկանշական է, որ նշված գործերը հիմնականում անվավեր են ճանաչվել**

հիմնականում հարակից բազաների համադրումները ստանալուց հետո: Այն հիմք է տալիս արձանագրելու, որ նշված գործերի անվավեր ճանաչելու հիմքերը և հանգամանքները հանգամանալից ուսումնասիրման կարիք ունեն:

Առաջարկ

Քանի որ, նշված ծրագրին առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, նախարարությանն առաջարկվում է հնարավոր ռիսկերի հայտնաբերման նպատակով պարբերաբար կատարել նշված համադրումները՝ դրանք ընդգրկելով իրականացվող մոնիթորինգի ծրագրերում:

Ղեկավարության արձագանք

Նախարարության կողմից ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ տեղեկացվել է, որ արձանագրությամբ ներկայացված առաջարկությունների շուրջ իրականացվելիք աշխատանքները կգտնվեն նախարարության մշտական հսկողության տակ:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄ

Չաշխատող մայրերի գործերի թիվը կազմել է 26574

Տարեկան ճշտված ծրագիրը Մայրության նպաստի վճարման մասով կազմել է 10,432,641.9 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 10,432,324.8 հազ. դրամ: Չաշխատող մայրերի գործերի թիվը կազմել է 26574՝ 3,358,752.7 հազ. դրամ վճարած գումարով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից ապահովադիրներին փոխհատուցած և ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց մայրության նպաստ ստացողների թվաքանակը կազմել է 1574՝ 326,956.8 հազ. դրամ վճարած գումարով, որպես «Եկամտահարկի մասով կատարված պարտավորության մարում» ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին փոխանցվել է 6,746,615.0 հազ. դրամ, որոնց շահառուների մասով Ծառայությունը հաշվառում չի վարում:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված է, որ «Նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները գործատուն վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի հաշվին: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չէ նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար, ապա գործատուն նպաստի պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործատուի կողմից հարկային մարմին ներկայացրած տեղեկանքի հիման վրա հարկային մարմնի հաստատած տեղեկանքը լիազոր մարմին ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում»:

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ մայրության նպաստի մասով թվով 1373 կազմակերպությունների տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չի եղել պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար: Հետևաբար, համաձայն սահմանված կարգով ներկայացված տեղեկանքների, Սոցիալական ապահովության պետական ծառայությունը եկամտային հարկի չբավարարող մասը, որը վճարվել էր գործատուի միջոցներից, 280,633.1 հազ. դրամ

գումարի չափով փոխհատուցել է համապատասխան գործատուներին: Միևնույն ժամանակ, ՊԵԿ-ը Սոցիալական ապահովության պետական ծառայությունից պետք է պահանջեր և ստանար միայն եկամտային հարկի հաշվին պակասեցված գումարների մասը:

ՊԵԿ-ին ավել է փոխանցվել գործատուներին Սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից փոխհատուցված 280,633.1 հազ. դրամը:

Մինչդեռ, Սոցիալական ապահովության պետական ծառայությունում նշված կազմակերպությունների մասով հարկային մարմիններից ստացված տեղեկանքների և ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության համադրման արդյունքում պարզվեց, որ ՊԵԿ-ը Սոցիալական ապահովության պետական ծառայությունից համապատասխան գրություններով պահանջել և ստացել է ոչ միայն մայրության նպաստի եկամտային հարկով պակասեցված մասը, այլ մայրության նպաստի ողջ գումարի չափը՝ 584,789.6 հազ. դրամ: Իսկ Ծառայությունը նշված գումարները հարկային մարմինների կողմից առցանց եղանակով տրամադրված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարների մասին տվյալների հետ համեմատելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ առկա է նաև գործատուների մոտ եկամտային հարկի չբավարարող մաս, որը փոխհատուցվել է հենց Ծառայության կողմից: **Արդյունքում, ՊԵԿ-ին ավել է փոխանցվել գործատուներին Սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից փոխհատուցված 280,633.1 հազ. դրամ:**

Առաջարկ

Ծառայությունում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել ՊԵԿ-ին վճարվող գումարների անհամապատասխանությունները, ինչպես նաև ապահովել անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների արդյունքում ավել վճարված գումարների հետ վերադարձը պետբյուջեի համապատասխան հաշվին:

Ղեկավարության արձագանք

ՀՀ ՊԵԿ-ի կողմից յուրաքանչյուր ամիս ծառայությանն է տրամադրվում եկամտային հարկի հաշվին ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով կատարված ծախսերի ֆինանսավորման ենթակա գումարների վերաբերյալ տեղեկատվությունը նախորդ ամսվա և տարվա սկզբից աճողական կտրվածքներով: Նշված տեղեկատվությունը համեմատվում է ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1676-Ն որոշման շրջանակներում հարկային մարմինների կողմից առցանց

եղանակով ստացված՝ այդ թվում ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարների տվյալների հետ, ամփոփվում և ներկայացվում է վճարման /փոխհատուցման/:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒԻ, ԾԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՌՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ

1. *Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում*

5 դեպքերում չնայած հուղարկավորությունը կատարվել է «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից, սակայն տրամադրվել է նաև թաղման նպաստ՝ 1,000.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Ընդ որում, նշված 5 դեպքերում նպաստը ստացել է մեկ անձ:

Տարեկան ճշտված ծրագիրը թաղման նպաստի մասով կազմել է 4,909,000.0 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 4,872,969.9 հազ. դրամ, շահառուների թվաքանակը կազմել է 24365: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող նպաստառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ հաստատությունը»: Հաշվեքննության ընթացքում, հիմք ընդունելով «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից տրված տեղեկատվությունը, պարզվեց, որ 5 դեպքերում չնայած հուղարկավորությունը կատարվել է «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից, սակայն տրամադրվել է նաև թաղման նպաստ՝ 1,000.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով; Ընդ որում, նշված 5 դեպքերում նպաստը ստացել է մեկ անձ:

Առաջարկ

Քանի որ, «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթը չի վերաբերվում միայն պետական կազմակերպություններին, ինչպես նաև «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամը ՀՀ պետական բյուջեից ստանում է սուբսիդիա, առաջարկվում է ապահովել անհամապատասխանությունների և խեղաթյուրումների արդյունքում ավել վճարված գումարների հետ վերադարձը պետբյուջե:

Ծառայությունում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել նմանատիպ անհամապատասխանությունները:

Պարզել այն հանգամանքները, որի պարագայում «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից հուղարկավորելու դեպքում մահվան վկայականները և համապատասխան տեղեկանքները գտնվել են մեկ անձի մոտ, որն էլ հիմք է հանդիսացել թաղման նպաստ ստանալու համար:

Ղեկավարության արձագանք

Համաձայն Ծառայության պարզաբանման, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ կազմակերպությունը: ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 9-ով սահմանված «Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ նշանակելու և վճարելու կարգի 20-րդ կետում նշված է այն կազմակերպությունների ցանկը, որտեղ կենսաթոշակառուներին նշանակվում և վճարվում է կենսաթոշակ: Նշված ցանկում «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամը նախատեսված չէ»:

2. *Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում*

Պարզվեց, որ առկա է մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու բազմաթիվ դեպքեր:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ առկա է մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու բազմաթիվ դեպքեր: **Մասնավորապես, 60 անձինք ստացել են 448 թաղման նպաստ՝ 89,600.0 հազ. դրամ ընդհանուր գումարով**: Ընդ որում, 4 անձ ստացել է 267 թաղման նպաստ՝ 53,400.0 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից մեկ անձ՝ 169 նպաստ՝ 33,800.0 հազ. դրամ գումարով, մեկ անձ 45 նպաստ՝ 9,000.0 հազ. դրամ գումարով, մեկ անձ՝ թվով 35 նպաստ՝ 7,000.0 հազ. դրամ գումարով և մեկ անձ 18 նպաստ՝ 3,600.0 հազ. դրամ գումարով: Չնայած ՀՀ օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա մեկ անձի կողմից թաղման նպաստ ստանալու քանակների վերաբերյալ, սակայն **նշված հանգամանքը իր մեջ հնարավոր խեղաթյուրումների ռիսկեր է պարունակում**:

Առաջարկ

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է պարզել այն հանգամանքները և իրավիճակները, որի պարագայում թաղման նպաստ ստանալու համար մեկ անձի մոտ կարող են հայտնվել մահվան բազմաթիվ վկայականներ և համապատասխան տեղեկանքներ: Քննարկել անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու նպատակահարմարության հարցը:

Ղեկավարության արձագանք

Ղեկավարության կողմից արձագանք չի ներկայացվել:

ՀՄՊ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ, ՀՄՊ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԵՎ 25.11.1998Թ. ՀՕ-258 ՕՐԵՆՔԻ 34.1 ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Տարեկան ճշտված ծրագիրը պարգևավճարների մասով կազմել է 11,342,000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11,319,653.6 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 11,328,880.8 հազ. դրամ, շահառուների թվաքանակը կազմել է 36561:

ՀՀ կառավարության 05.05.2011թ. «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 670-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակ վճարելու կարգի» 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումներն են «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային ստորաբաժանումները, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումները»:

36561 շահառուներից 23065 շահառուի (2017թ.-ին ընդամենը դրամարկղային ծախս 7,025,753.4 հազ. դրամ) կազմը որոշվել է համապատասխան ուժային կառույցների կողմից:

Նշված բոլոր գործերը և փաստաթղթային հիմքերը գտնվում են համապատասխան գերատեսչությունում: Ընդ որում, գումարները ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությունը փոխանցել է համապատասխան ուժային կառույցների ամենամսյա գրություններով ներկայացված հայտերի հիման վրա:

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հաշվեքննության ընթացքում փաստաթղթային ուսումնասիրություն է կատարվել ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից նշանակված գործերի մասով, որի արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, մասնավորապես՝

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշմամբ սահմանված են, այն դեպքերը, որի պարագայում զինծառայողները ստացել են հաշմանդամության կարգեր, որի հիման վրա էլ իրականացվում է նպաստի գումարի հաշվարկը: Սոցիալական ապահովության պետական ծառայությունում առկա փաստաթղթերի **ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2 դեպքերում պարգևավճար է տրամադրվել նշված որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն** /Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում ԽՍՀՄ զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կամ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձինք/, մինչդեռ նշված դեպքերում նրանց պարգևավճար պետք է տրվեր համաձայն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի /ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք/**: Ավել վճարված գումարը կազմել է 576.0 հազ. դրամ:**

Ավել է վճարվել 576.0 հազ. դրամ

Առաջարկ

Ծառայությունում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել նմանատիպ անհամապատասխանությունները, ինչպես նաև ապահովել անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների արդյունքում ավել վճարված գումարների հետ վերադարձը պետբյուջեի համապատասխան հաշվին:

Ղեկավարության արձագանք

Մեկ դեպքում ծառայության կողմից տարածքային բաժնին կտրվի ցուցում շահառուին նշանակված պարգևավճար ստանալու իրավունքը դադարեցնելու և սխալմամբ /ՀՀ օրենքի խախտմամբ/ ավել վճարված կենսաթոշակի գումարը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն պետական բյուջե վերականգնելու վերաբերյալ: Երկրորդ դեպքում նշանակված պարգևավճարի իրավաչափության հարցը քննության կառնվի հաշմանդամության պատճառական կապի վերաբերյալ Ծառայության կողմից ՀՀ ԲՍՓՀ գործակալություն հարցում կատարելուց և ճշտված տեղեկատվություն ստանալուց հետո:

2. Անհամապատասխանություն և խեղաթյուրում

Ավել է վճարվել 732.0 հազ. դրամ պարգևավճար

Մեկ դեպքում գործ թիվ 0391409438785, գործում առկա է ամուսնության վկայականի 2008

թվականին տրված կրկնօրինակը /վկ. 092517 տրվ.04.18.2008. Չարենցավանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին/, որում ամուսնության ամսաթիվը նշված է 2008 թ.: Ըստ մահվան վկայականի /1-ՅԺ006585 մահվան վկայական/ Շահառուի ամուսինը մահացել է 1994 թվականի մայիսի 17-ին, **այսինքն, 2008 թվականին չէր կարող ամուսնության գրանցում կատարվեր: Արդյունքում, ավել է վճարվել 732.0 հազ. դրամ պարգևավճար:**

Առաջարկ

Քանի որ ՀՀ օրենսդրությամբ ծննդյան վկայականներում հոր մասին տվյալները կարող են լրացվել նաև ծնողների ամուսնության գրանցում չունենալու պարագայում, հետևաբար, ծննդյան վկայականում հոր մասին տվյալները չեն հանդիսանում ամուսնության գրանցման փաստ, ուստի առաջարկում ենք Ծառայությունում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել նմանատիպ անհամապատասխանությունները, ինչպես նաև ապահովել անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների արդյունքում ավել վճարված գումարների հետ վերադարձը պետբյուջե:

Ղեկավարության արձագանք

Ծառայության կողմից հղում է արվում գործում առկա փաստաթղթերին, մասնավորապես 1992թ. և 1994թ. տրված երեխաների ծննդյան վկայականների պատճենները, որոնցում «ծնողների անունները նույնական են նշված ամուսնության վկայականի հետ»:

3. Անհամապատասխանություն և խեղաթյուրում

Առկա է 2,424.0 հազ. դրամ գումարի չափով անհամապատասխանության և խեղաթյուրման ռիսկ:

Թվով 8 դեպքերում ԲՍՓՀ-ի կողմից նախկինում տրված եզրակացություններում նշված է, որ հաշմանդամությունը ձեռք է բերվել ծառայության ընթացքում կամ ընդհանուր հիվանդությամբ: Մինչդեռ, նոր եզրակացություններում առանց հիմքերի նշվել է, որ հաշմանդամությունը ձեռք է բերվել ծառայողական պարտականությունները կատարելիս /2011թ. թիվ 668-ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի համապատասխան/: **Արդյունքում, առկա է 2,424.0 հազ. դրամ գումարի չափով անհամապատասխանության և խեղաթյուրման ռիսկ:**

Առաջարկ

Քանի որ, չեն հիմնավորվում այն հանգամանքները, թե ինչպես են ԲՍՓՀ-ի ակտերի նախկին քաղվածքներում որպես հաշմանդամության պատճառ «ծառայության

ընթացքում» կամ «ընդհանուր հիվանդության» գրառումները վերափոխվել «ծառայողական պարտականությունները կատարելիս» գրառմամբ, դիմել նախարարությանը և ԲՍՓՀ-ին նշված դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով:

Ներդնել ներքին հսկողական համակարգ ԲՍՓՀ-ի փոփոխվող քաղվածքների դեպքերը հայտնաբերելու և փոփոխությունները համապատասխան մարմինների միջոցով պարզաբանելու նպատակով:

Ղեկավարության արձագանք

Ծառայությունը հղում է անում ԲՍՓՀ-ի համապատասխան ակտերի քաղվածքները, որոնց հիման վրա նշանակվել են պարգևավճարներ:

«ՎՏԲ- ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ ԱՎԱՆԴԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՈՐՊԵՍ ՆԱԽԿԻՆ ԽՍՀՄ ԽՆԱՅԲԱՆԿԻ ՀԽՍՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՄԻՆՉԵՎ 1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ը ՆԵՐԴՐՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Ավանդատուների թվաքանակը կազմել է 8265

Տարեկան ճշտված ծրագիրը ավանդների փոխհատուցման մասով կազմել է 1,485,148.6 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,484,742.4 հազ. դրամ, ավանդատուների թվաքանակը կազմել է 8265: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Ծառայությունը որևէ հսկողական գործառույթ չի իրականացնում ծախսված գումարների օրինականության և արդյունավետության նկատմամբ: Ֆինանսական հատկացումները, չնայած կատարվում են ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից, սակայն դրանց տրամադրման հետ առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի և «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից: Ծրագրով նախատեսված գումարները տրամադրվել են ՀՀ մարզպետարանների և Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ենթակայության սոցիալական աջակցության 55 տարածքային մարմիններին, որոնց միջոցով էլ իրականացվում է նշված ծրագրով ավանդատուների կազմի որոշման և գումարների տրամադրման ողջ գործընթացը:

1. Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Հայտնաբերվել են թվով 305 անհամապատասխանություններ՝ վճարված 54,186.6 հազ. դրամ:

Հարցման արդյունքում սոցիալական աջակցության տարածքային մարմիններից ստացված տեղեկատվության վերլուծության և համադրման արդյունքում հայտնաբերվել են 305 անհամապատասխանություններ՝ վճարված 54,186.6 հազ. դրամ, **Արդյունքում, 305 շահառուների գծով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 54,186.6 հազ. դրամի չափով:**

Մասնավորապես՝

1. 126 ավանդատուների մասով /վճարած 21,478.3 հազ. դրամ/ սոցիալական աջակցության տարածքային մարմինները ներկայացրել են նույն տարում տեղեկանքների կրկնվող համարներ: **Արդյունքում, 126 ավանդատուների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 21,478.3 հազ, դրամի չափով:**
2. 149 ավանդատուների մասով /վճարած 27,208.5 հազ. դրամ/ սոցիալական աջակցության տարածքային մարմինները տեղեկանքների համարները և ամսաթվերը չեն լրացրել: **Արդյունքում, 149 ավանդատուների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 27,208.5 հազ, դրամի չափով**:
3. 19 ավանդատուների մասով /վճարած 3,933.3 հազ. դրամ/ սոցիալական աջակցության տարածքային մարմինները տեղեկանքների ամսաթվերի և համարների մասերում այլ նշումներ են կատարել: **Արդյունքում, 19 ավանդատուների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 3,933.3 հազ, դրամի չափով** :
4. Սոցիալական աջակցության տարածքային մարմինները 11 ավանդատուների մասով /վճարած 1,566.5 հազ. դրամ/ ցուցակներից հանել են ավանդատուների անունները և տվյալները ներկայացրել են առանց այդ 11 ավանդատուների: **Արդյունքում, 11 ավանդատուների մասով առկա է խեղաթյուրման ռիսկ առավելագույնը 1,566.5 հազ, դրամի չափով** :

Նշված անհամապատասխանությունների ճշտման և պարզաբանման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ուղղված 26.11.2018թ. թիվ ՀՊԵ-272 գրությանն ի պատասխան նախարարի պաշտոնակատար, նախարարի առաջին տեղակալի 29.11.2018թ. թիվ ԱԱՄ/ԱՄ-2/18952-18 գրությամբ նշվում է, որ «բոլոր փաստաթղթերը, օրենսդրությամբ սահմանված կարգով, պահվում են համապատասխան սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում /բաժիններում/. ուստի վերջիններիս կողմից ՀՀ Հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության անհամապատասխանությունը ճշտելու կամ պարզաբանելու հարցով հանձնարարություններ տալու համար խնդրում եմ դիմել այդ գործակալությունների /բաժինների/ վերադաս մարմիններին՝ համապատասխան մարզպետարաններ կամ քաղաքապետարաններ»:

Չեն տրամադրել նախարարությունում առկա ավանդատուներին տրվող տեղեկանքները՝ հաշվեքննության համապատասխան ընթացակարգերը իրականացնելու նպատակով:

Միևնույն ժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ուղղված

24.10.2018թ. թիվ ՀՊԵ-228 գրությանն ի պատասխան, նախարարի 09.11.2018թ. թիվ ՄԹ/ԱՄ-1-3/17641-18 գրությամբ, հիմք ընդունելով «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածները, նախարարությունը հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձանց չի տրամադրել նախարարությունում առկա ավանդատուներին տրվող տեղեկանքները՝ հաշվեքննության համապատասխան ընթացակարգերը իրականացնելու նպատակով:

Առաջարկ

Քանի որ, նշված ծրագրին առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, առաջարկվում է նախարարությանը տեղեկանքների կրկնվող համարների և նշված այլ անհամապատասխանությունների ճշգրտման նպատակով իրականացնել ընթացիկ հսկողական գործընթաց, ինչպես նաև ներդնել հսկողական համակարգ հնարավոր անհամապատասխանությունները և խեղաթյուրումները բացահայտելու և բացառելու նպատակով:

Ղեկավարության արձագանքը

Ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ տեղեկացվել է, որ արձանագրությամբ ներկայացված առաջարկությունների շուրջ իրականացվելիք աշխատանքները կգտնվեն նախարարության մշտական հսկողության տակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Օրենսդրության սահմանումները կենսաթոշակի իրավունքի, կենսաթոշակ ստանալու իրավունքի, կենսաթոշակ նշանակելու ու վճարելու, կենսաթոշակի իրավունքի դադարեցման և վերականգնման, կենսաթոշակի վճարումը դադարեցնելու և վերականգնելու համար սահմանված բազմաթիվ ու բազմաբնույթ պայմանները կենսաթոշակների հետ կապված հարաբերությունները դարձնում են ռիսկային: Ավելին, առանձին բացառությունները, որոնք կապված են պետական բյուջեից այլ ծրագրերով ֆինանսավորման հետ, մասնավորապես բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող և հոգեբուժարաններում բուժվող անձանց կենսաթոշակային հարաբերությունները ենթադրում են երկակի մոտեցումներ, որոնք հիմնված չեն սոցիալական հավասարության և համերաշխության սկզբունքի վրա: Մի դեպքում վճարվում է կենսաթոշակների միայն աշխատանքային մասը, իսկ մյուս դեպքերում վճարվում է կենսաթոշակն ամբողջությամբ՝ հիմնականում լիազորված անձանց միջոցով: Ավելին, կենսապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելու պետական կենսաթոշակային համակարգի սկզբունքի տեսանկյունից նույնպես անհասկանալի են միևնույն հավասար պայմաններ չունեցող քաղաքացիներին կենսաթոշակների միևնույն չափաքանակի վճարումները: Եթե կենսաթոշակառուն արդեն իսկ ընդգրկված է այլ պետական ծրագրերով ֆինասավորվող հարաբերություններում (հոգեբուժարաններում երկարատև խնամք, քրեակատարողական հիմնարկներում պատժի կրում, բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող և այլն), որտեղ ապահովվում է վերջինիս կենսապահովման նվազագույն զամբյուղը, ապա, ենթադրաբար, նրանց կենսաթոշակների վճարումը անհավասար պայմաններ է ստեղծում այլ կենսաթոշակառուների նկատմամբ՝ դրանով իսկ խաթարելով սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության սկզբունքները:

2

Կենսաթոշակների տեսակների սահմանումները, դրանց տարբերակումները, ստաժի հաշվարկման պայմաններն ու մոտեցումները իրենց մեջ կրում են ռիսկեր և սուբյեկտիվ գործոնի բարձր ազդեցություն, կապված տեղեկատվական համակարգերում ամբողջական տեղեկատվության բացակայությամբ: Ի վերջո, ՀՀ սահմանադրությամբ և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է մարդու սոցիալական ապահովության իրավունքը, որը իրականացվում է ելնելով սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության ապահովման, կենսապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելու սկզբունքներից: Հետևաբար, հիմնական նպատակը կենսաթոշակի իրավունքի իրացման ընթացքում սոցիալական ապահովության այլ ծառայությունների հասանելիությունն է: Մինչդեռ առկա են կենսաթոշակի 6 տեսակներ, որոնք ունեն հաշվարկման առանձին սկզբունքներ, տարիքային տարբեր կազմ և այլն, ինչպես նաև զինվորական կենսաթոշակների առանձին տեսակներ: Սոցիալական համերաշխության և արդարության սկզբունքը ենթադրում է սերունդների միջև գիտակցված համերաշխություն, երբ աշխատունակ տարիքում անձինք գիտակցում են իրենց եկամուտներից ավագ սերունդներին, անաշխատունակներին և սոցիալական աջակցման կարիք ունեցող անձանց մասհանումների կատարման կարևորությունը՝ վերջիններիս կենսապահովման նվազագույն պայմաններ ապահովելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ առկա է առանձին մասնագիտություններ և կյանքի համար վնասակար/վտանգավոր աշխատանքներ իրականացնելը խրախուսելու քաղաքականության անհրաժեշտություն, ինչը ապահովվում է կենսաթոշակի տարիքի այլ շեմ նշանակելով կամ կենսաթոշակի հաշվարկային այլ մեխանիզմներ ու չափեր կիրառելով: Սակայն այդ անձանց առողջությանը ուղղակի կամ անուղղակի հասցված վնասը վերականգնելը ենթադրում է առողջապահական ծառայությունների փաթեթի ընդլայնում, վերջիններիս կենսաթոշակային տարիքի շեմի նվազեցում, սակայն ոչ կենսաթոշակների հաշվարկման սկզբունքների տարբերակում, ինչն էլ պատճառ է հանդիսանում չարաշահումների համար:

3

Լիազորագրերով կենսաթոշակների վճարումները նույնպես ռիսկային են, քանզի գործող օրենսդրությամբ չեն կարգավորվում լիազորագիր ստացող անձի և կենսաթոշակառուի փոխհարաբերությունները, ազգակցական կապը և այլն: Ավելին, քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող շահառուի կենսաթոշակը վճարվում է (կենսաթոշակ ստանալու

իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է) նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով: Հոգեբուժարաններում բուժվողների և քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրողների տվյալներով բանկային վճարումները կազմել են համապատասխանաբար՝ 164,703.0 հազ. դրամ և 3,709,9 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի վճարումները՝ 438,162.0 հազ. դրամ և 44,575.7 հազ. դրամ:

4 Կանոնակարգված չէ հետ վերադարձված գումարների («Հայփոստ» ՓԲԸ-ը, բանկեր, առանձին ֆիզիկական անձեր) հաշվառումը և համադրումը «էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի միջոցով, որն էլ հիմք է հանդիսանում համակարգի «վճարված կարգավիճակ ունեցող» գործերի հանրագումարի և փաստացի կատարողականի միջև տարբերությունների:

5 Էլեկտրոնային կենսաթոշակների համակարգում նույնականացման հիմք են հանդիսանում շահառուների կենսաթոշակային գործերը: Անձի ՀԾՀ-ով որոնելու դեպքում հնարավոր չէ ստանալ տվյալ ՀԾՀ-ով գրանցված կենսաթոշակային բոլոր գործերը և վերահսկել բոլոր վճարումներն ու գնահատել ռիսկերը:

6 Հոգեբուժական բուժօգնություն ստացող անձանց վճարումների վերաբերյալ ամբողջական գնահատական հնարավոր չի եղել իրականացնել 2017թ.-ի մայիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում բուժօգնություն ստացած անձանց անհատական տվյալները չտրամադրելու պատճառով, իսկ ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ համադրության արդյունքում չեն նույնականացվել 2017թ.-ի հունվար-ապրիլ ժամանակահատվածում բուժօգնություն ստացած 132 անձանց տվյալներ:

7 Ռիսկային են գնահատվում օտարերկրյա քաղաքացիներին և երկքաղաքացիներին կատարված վճարումները, քանի որ վճարումներ ստացած որոշ անձանց տվյալները էլեկտրոնային կենսաթոշակի համակարգում նույնականացնելու արդյունքում պարզվել է, որ չնայած ՍԷԿՏ համակարգում տվյալ անձանց վերաբերյալ տրվում է հաղորդագրություն, որ ավելի քան 12 ամիս բացակայում է, սակայն այդ անձինք շարունակել են վճարվել բանկի կողմից և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով որոշ ժամանակահատված: Բոլոր այս դեպքերում կիրառվում է քաղաքացու կողմից հայտարարության հիման վրա իրավունքի ճանաչումը կամ դադարեցումը, ինչը մի շարք դեպքերում, առանց վարչական վերահսկման, գնահատվում է առավել ռիսկային: Նշված

դեպքերում բանկային փոխանցման միջոցով վճարվել է 27,312.8 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով կատարված վճարումները կազմում են 30,795.8 հազ. դրամ:

8 Չնայած պետական կենսաթոշակների էլեկտրոնային համակարգի գործունեությունը ըստ տեխնիկական առաջադրանքի և հետագա բարելավումների արդյունքների տեսանկյունից կայուն է, սակայն ներդրումների բացակայությունը միջգերատեսչական տվյալների էլեկտրոնային շրջանառության հնարավորության սահմանափակումների պայմաններում դրա արդյունավետ գործունեությունը ռիսկային է դարձնում:

9 ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված ԲՊՌ-ի տվյալների հիման վրա նախապատրաստվում է տվյալների բազա, որը հիմք է հանդիսանում համակարգում առկա շահառուների նույնականացումների և տեղաշարժերի համար, ինչն ավելացնում է տվյալների բազաների փոխգործակցման ընթացքում սուբյեկտիվ բացթողումների և սխալների հավանականության չափաբաժինը: Սա լրացուցիչ ռիսկեր է պարունակում համակարգի շահագործման և տվյալների նույնականացման հարցում: Այդ իսկ պատճառով, «Պետական կենսաթոշակային տեղեկատվական համակարգ»-ի շահառուների տվյալների և ԲՊՌ տվյալների բազայի համադրումների արդյունքում չեն նույնականացվել 133 անձանց տվյալներն ըստ Հանրային Ծառայությունների Համարանիշի:

10 Այլ գերատեսչությունների կողմից հավաքագրվող տեղեկատվությունը թերի է կամ անհասանելի: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան բացակայում է, իսկ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացվող տվյալները ամբողջական չեն, և հիմնականում չեն պարունակում քաղաքացիների անհատական տվյալները, ինչը անհնար է դարձնում ռիսկերի գնահատումը:

11 ՍԷԿՏ համակարգից ստացվող տվյալների ծավալն ու բովանդակությունը բավարար չէ Ծառայության լիազորությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, մասնավորապես՝

- որոշակի ժամանակահատված (3 ամիս, 6 ամիս, 1 տարի) Հայաստանի Հանրապետությունից բացակայող կենսաթոշակառուների և նպաստառուների վերաբերյալ տեղեկատվության հետ Ծառայությանը

չեն տրամադրվում Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու ամսաթվի վերաբերյալ տվյալներ,

- սահմանահատում իրականացնելու ամսաթվի վերաբերյալ տվյալները չեն ստացվում նաև այն դեպքում, երբ անհատական հարցումը կատարվում է սահմանահատում իրականացնելուց մեկ ամիս հետո,

փաստացի սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվության կապակցությամբ խնդիրներ են առաջանում նաև այն դեպքում, երբ անձը Հայաստանի Հանրապետությունից ելք է կատարում ՀՀ քաղաքացու անձնագրով, իսկ մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ օտարերկրյա անձնագրով,

- ենթահամակարգը հնարավորություն չի տալիս նաև սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը որոնել անուն-ազգանունով, ինչը ևս խնդրահարույց է՝ հատկապես օտարերկրյա քաղաքացիների դեպքում:

Արձանագրված ռիսկերի հետևանքով 2017 թվականի բոլոր ամիսների հարցումների արդյունքում «12 ամիս բացակայում է» կարգավիճակով անձանցից բանկերի միջոցով վճարվել է 702,651.2 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով՝ 619,099.1 հազ. դրամ: 3, 6 և 9 ամիս բացակայած շահառուներից 2017 թվականի ընթացքում բանկային վճարումներով ստացել են 9,014,537.7 հազ. դրամ, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով՝ 4,023,370.2 հազ. դրամ:

12 Բացակայում է բյուջետային ցուցանիշների պլանավորման և կանխատեսումների հաշվարկման (ակտուարական) հաստատված մեթոդաբանությունը, որի արդյունքում.

- աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի ծրագրային ցուցանիշների շարունակաբար ավելացումը հանգեցրել է նրան, որ 2016թ. -ին առաջացել են 1,232,132.2 հազ. դրամ, իսկ 2017 թվականին՝ 2,727,539.0 հազ. դրամ բյուջետային ազատ միջոցներ,

- 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտով 20575 աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցողների կրճատումը, որը պետք է բերեր շուրջ 9,0 մլրդ դրամի խնայողության, իրականում տեղի չի ունեցել և բացակայում են այդ կրճատման կոնկրետ շահառուների ցանկերը,

- տեղի չի ունեցել նաև աշխատանքային ստաժի տևողության կրճատում, որի արդյունքում պետք է խնայվեր շուրջ 3.0 մլրդ դրամ՝ շուրջ 350.000 տարի աշխատանքային ստաժի հաշվարկման դեպքերի

նվազեցմամբ պայմանավորված:

13 «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ին միջնորդավճար է տրամադրվել վճարված կենսաթոշակի գումարի 1%-ի չափով՝ առանց համապատասխան հաշվարկ-հիմնավորման: Արդյունքում, «Հայփոստ» ՓԲ ընկերությանը մեկ կենսաթոշակառուի համար մատուցված ծառայությունների դիմաց պետբյուջեի միջոցների հաշվին կատարված վճարումները 12.7 անգամ ավելի ծախսատար են եղել (1,506,499.6 հազ. դրամ), քան բանկերի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումները (80,544.0 հազ. դրամ):

14 2017թ. -ի ընթացքում Մոնիթորինգի վարչության կողմից չի կատարվել Ծառայության որևէ տարածքային ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների ամբողջական վերլուծություն և գնահատում, ինչպես նաև ստուգումներ չեն կատարվել վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում («Հայփոստ» ՓԲԸ-ը և բանկեր): Մինչդեռ, ըստ կանոնադրության 11-րդ կետի, վարչության հիմնական խնդիրներն են՝ վերլուծությունների և մոնիթորինգի միջոցով տարածքային ստորաբաժանումների աշխատանքների ամբողջական գնահատումը և մոնիթորինգի իրականացումը նաև վճարման ծառայություններ մատուցող կազմակերպություններում:

15 Մոնիթորինգի վարչության կանոնադրության 4-րդ գլխի 7-րդ կետով սահմանված է, որ վարչությունը ուսումնասիրում, վերլուծում է կենսաթոշակների և նպաստների վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ կազմված փոխադարձ ակտերում առկա տեղեկատվությունը և դրա նկատմամբ իրականացնում է մոնիթորինգ, սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մոնիթորինգի վարչության կողմից ստուգվող ժամանակահատվածում փոխադարձ ակտերի տեղեկատվության վերլուծություն և մոնիթորինգ չի իրականացվել:

16 Մոնիթորինգի վարչության կողմից ստուգված 31 հիմնարկներից 13-ում արձանագրված խախտումների, մասնավորապես, ավելի հաշվարկված աշխատանքային ստաժի և ավելի վճարված գումարների վերաբերյալ հաղորդումներ չեն ուղարկվել իրավապահ մարմիններին:

17 Մինչև 2017թ. հուվարի 1-ը գործող օրենսդրության խախտմամբ ավելի վճարված գումարը կազմել է 272 մլն. դրամ, որը 2016թ. դեկտեմբերի 16-ի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով զիջվել է: 2017թ. ընթացքում դարձյալ օրենքի խախտմամբ, ավելի հաշվարկված և վճարված կենսաթոշակների գումարը կազմել է 121.2 մլն. դրամ: Նշվածը փաստում է, որ ռիսկերի վերացմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով Ծառայության կողմից իրականացվող վարչարարությունը դեռևս կատարելագործման կարիք ունի:

18 2017 թվականին Ծառայության 54 ստորաբաժանումներից 24-ը տեղակայվել են վարձակալված տարածքներում, որոնցից 6-ի դեպքում տարածքի վարձակալության պայմանագրերը կնքելուց հետո չի ապահովվել ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև վերոնշյալ պայմանագրերով սահմանված իրավունքի պետական գրանցման պահանջի իրականացումը:

19 «Մայրության նպաստի վճարում» ծրագրի մասով անհամապատասխանությունը և խեղաթյուրումը կազմել է 1373 դեպք՝ 280,633.1 հազ. դրամի չափով:

20 «Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» ծրագրի մասով անհամապատասխանությունը և խեղաթյուրումը կազմել է 5 դեպք՝ 1,000.0 հազ. դրամի չափով:

21 «ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողություններում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 մասով սահմանված պարգևավճարների տրամադրում» ծրագրի մասով անհամապատասխանությունը և խեղաթյուրումը կազմել է 3 դեպք՝ 1,308.0 հազ. դրամի չափով:

22 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով անհամապատասխանության և խեղաթյուրման ռիսկը 10954 շահառուների մասով կազմել է 2,255,731.2 հազ. դրամ:

23 «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրով անհամապատասխանության և խեղաթյուրման ռիսկը 305 շահառուների մասով կազմել է 54,186.6 հազ. դրամ:

24 «Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» ծրագրով անհամապատասխանության և խեղաթյուրման ռիսկը կազմել է 448 շահառուների մասով 89,600.0 հազ. դրամ:

25 «ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողություններում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 մասով սահմանված պարգևավճարների տրամադրում» ծրագրով անհամապատասխանության և խեղաթյուրման ռիսկը կազմել է 8 շահառուի մասով 2,424.0 հազ. դրամ:

26 «Մայրության նպաստի վճարում» ծրագրի մասով ՊԵԿ-ին, որպես եկամտահարկի մասով պակասեցված գումար, ավել փոխանցված 280,633.1 հազ. դրամ գումարը պայմանավորված է Ծառայությունում ներքին հսկողական համակարգի ոչ բավարար լինելու հանգամանքով:

27 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրերի մասով Ծառայությունը որևէ հսկողական գործառույթ չի իրականացնում ծախսված գումարների օրինականության և արդյունավետության նկատմամբ: Մինչդեռ, դրանց տրամադրման հետ առնչվող ողջ տեղեկատվական և վերահսկողական համակարգը շարունակվում է սպասարկվել և իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամի կողմից:

28 Հարակից բազաների համադրման արդյունքների քննարկումների մասով նպաստի վճարումները շարունակելու վերաբերյալ համակարգող խորհուրդների որոշումների կայացման որևէ չափորոշիչներ, ուղեցույցներ կամ որևէ մեթոդական կարգավորումներ չկան: Այն կարող է սուբյեկտիվ մոտեցումների պատճառ հանդիսանալ: Նույնը կարելի է ասել նաև ՍԱՏՄ-ների կողմից նպաստի վճարումների դադարեցումների վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝

1. Քննարկել «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» և «ՎՏԲ- Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրերի մասով, որպես իրենց կողմից իրականացվող ծրագրեր, ծրագրերին առնչվող տեղեկատվական համակարգերին տիրապետելու հնարավորության, ինչպես նաև նախարարության կողմից դեռևս շարունակվող ընթացիկ լիազորությունների և գործառույթների մասով ծառայությանը վերապահելու նպատակահարմարության հարցերը:

2. Հնարավոր ռիսկերի հայտնաբերման նպատակով պարբերաբար կատարել «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի մասով հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձանց կողմից իրականացված համադրումները և դրանք տրամադրել ՍԱՏՄ-ներին՝ ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով, ինչպես նաև կատարել վերահսկողություն նշված տվյալների կիրառման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

3. Քննարկել անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ռիսկերի մասով արձանագրված դեպքերը՝ այն ընդգրկելով իրականացվող մոնիթորինգի ծրագրերում:

4. Քննարկել նպաստառու ընտանիքների անդամների կողմից հարակից բազաների՝ մասնավորապես անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռք բերումների, մաքսային մուծումների, տրանսպորտային միջոցների գրանցումների և այլ դեպքերում ՍԱՏՄ-ների կողմից նպաստի վճարումները դադարեցնելու, ինչպես նաև նպաստի վճարումները շարունակելու վերաբերյալ համակարգող խորհուրդների որոշումների կայացման հարցերում չափորոշիչների, ուղեցույցների կամ որևէ մեթոդական կարգավորումների մշակման նպատակահարմարության

հարցը:

5. Քննարկել և ուսումնասիրել ինչպես արձանագրված դեպքերի մասով, այնպես էլ այլ դեպքերում ԲՍՓՀ-ի ակտերի նախկին քաղվածքներում որպես հաշմանդամության պատճառ դարձած, «ծառայության ընթացքում», կամ «ընդհանուր հիվանդություն» գրառումները՝ «ծառայողական պարտականությունները կատարելիս,» գրառմամբ վերափոխվելու հանգամանքները:

6. Ավանդների փոխհատուցման մասով տեղեկանքների կրկնվող համարների և նշված այլ անհամապատասխանությունների ճշգրտման նպատակով իրականացնել ընթացիկ հսկողական գործընթաց, ինչպես նաև ներդնել հսկողական համակարգ հնարավոր անհամապատասխանությունները և խեղաթյուրումները բացահայտելու և բացառելու նպատակով:

7. Սոցիալական ոլորտում քաղաքականություն իրականացնող լիազոր մարմնի պարտավորությունը պետք է հանդիսանա քաղաքացիների նվազագույն կենսապահովման պայմանների իրական ապահովումը և յուրաքանչյուր տարեց մարդու արժանապատիվ գոյության ապահովման նպատակով վերջիններիս համար միասնական սկզբունքի հիման վրա հաշվարկվող գումարի վճարումը, ինչպես նաև վերջիններիս առողջապահական ծառայությունների և հասարակությանը ներառման նպատակով այլ ծառայությունների փաթեթների սահմանումը: Այսինքն, տարեցներին աջակցող ծրագրերի կազմումը և իրականացումը պետք է հիմնված լինի առաջին հերթին վերջիններիս համընդհանուր կարիքների բավարարման բազային ծավալների վրա և այնուհետև՝ ըստ առանձին ծառայությունների փաթեթների վրա (օրինակ, բժշկական ծառայությունների փաթեթ, տեղաշարժման նպատակով՝ տրանսպորտային ծառայությունների փաթեթ, մշակութային և այլ ծառայությունների փաթեթ): Կենսաթոշակի հաշվարկման համար չպետք է կիրառվեն ստաժի չափի կամ այլ մասնակի հասկացություններ, և կենսաթոշակառուները պետք է տարբերվեն միայն առողջապահական, մշակութային, տրանսպորտային կամ այլ ծառայությունների փաթեթների ծավալներով, որը կփոխհատուցի կենսաթոշակառուների կողմից կյանքի ընթացքում վնասակար/վտանգավոր

աշխատանքներ իրականացնելու հանգամանքը: Տարբերակումները կարող են կիրառվել նաև որոշակի խմբերի համար կենսաթոշակի անցնելու տարիքի այլ շեմ սահմանելու միջոցով:

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝

1. Ծառայությունում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել ՊԵԿ-ին «Մայրության նպաստի վճարում» ծրագրի մասով վճարվող գումարների անհամապատասխանությունները:

2. Ծառայությունում ներդնել այնպիսի ներքին հսկողական համակարգ, որը հնարավորություն կընձեռի ժամանակին և ամբողջությամբ հայտնաբերել արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները:

3. Ապահովել անհամապատասխանությունների և խեղաթյուրումների արդյունքում ավել վճարված գումարների հետ վերադարձը պետբյուջե:

4. Ներդնել ներքին հսկողական համակարգ պարգևավճարներ տրամադրելու նպատակով ԲՍՓՀ-ի կողմից տրվող փոփոխվող քաղվածքների դեպքերը հայտնաբերելու և փոփոխությունների պատճառները համապատասխան մարմինների միջոցով պարզաբանելու նպատակով:

5. Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է պարզել այն հանգամանքները և իրավիճակները, որի պարագայում թաղման նպաստ ստանալու համար մեկ անձի մոտ կարող են հայտվել մահվան բազմաթիվ վկայականներ և համապատասխան տեղեկանքներ: Քննարկել անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու նպատակահարմարության հարցը:

6. Քննարկել լիազորագրերով վճարումների պրակտիկայի ամբողջական վերացման հարցը կենսաթոշակների վճարման համակարգում, իսկ միջնորդավորված գումարների տրամադրումը շահառուներին կազմակերպել սոցիալական աշխատողների կամ սոցիալական ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպություններին

պատվիրակելու միջոցով, ինչը կարող է հանդիսանալ լավագույն երաշխիքը գումարների հասցեականության և նպատակային օգտագործման համար, ինչպես նաև սոցիալական ծառայությունների կողմից կենսաթոշակառուների կարիքների գնահատման պրակտիկ գործիք:

7. Պետական կենսաթոշակների էլեկտրոնային շտեմարանում ըստ անձի ՀԾՀ-ի կենսաթոշակների վճարումների որոնման և վերլուծման հնարավորությունների գործարկում, վճարման ցուցակներում բացի գումարն ստացող անձի տվյալներից տվյալ շահառուի անհատական տվյալների առկայության ապահովում:

8. Օտարերկրյա քաղաքացիների և երկքաղաքացիների կենսաթոշակի իրավունքի իրացման և վճարումների հարցերի կանոնակարգման նպատակով պետք է հստակ սահմանել կենսաթոշակը այլ երկրում ստանալու փաստերի ճշտման նպատակով հարցումների անցկացման մեխանիզմ, որը հնարավորություն կտա առցանց ռեժիմում տվյալներ ստանալ երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում, օտարերկրյա քաղաքացուն այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն և Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում, Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց դեպքում:

9. Տվյալների միջգերատեսչական փոխանակումը պետք է իրականացվի առավել համակարգված և տվյալների բազմակողմանի վերլուծության համար համապատասխան ծրագրային միջոցներ կիրառելու և այդ միջոցները թափանցիկ կառավարելու միջոցով: Անհրաժեշտ է նաև, որ այդ ծրագրային միջոցները լինեն ինքնաշխատ, նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը տվյալների

օտագործման ընթացքում:

10. Անհրաժեշտ է ներդնել համապատասխան հսկողական և մոնիթորինգի համակարգը, որով պարբերաբար համադրումներ կիրականացվեն ՍԷԿՏ համակարգի տվյալների և աշխատանքային կենսաթոշակ ստացող շահառուների միջև, հայտնաբերելու և ուսումնասիրելու համար այն ռիսկային դեպքերը, երբ աշխատանքային կենսաթոշակի շահառուն պատշաճ կարգով չի ներկայացել վճարող համապատասխան կառույց համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի:

Ծառայության կողմից հնարավորին սեղմ ժամկետում իրականացնել՝

- բանկերի միջոցով վճարված և ՍԷԿՏ համակարգի կողմից 2017թ.-ի ընթացքում 3-12 ամիս ժամանակահատվածով ՀՀ տարածքից բացակայող անձանց բանկ ներկայանալու ամսաթվերի և ՍԷԿՏ համակարգի կողմից սահմանը հատելու ամսաթվերի (դուրս գալու և մտնելու) համադրում,

- Հայփոստի միջոցով վճարված և ՍԷԿՏ համակարգի կողմից 2017թ.-ի ընթացքում 3-12 ամիս ժամանակահատվածով ՀՀ տարածքից բացակայող անձանց վճարումների ստացման ժամկետների և ՍԷԿՏ համակարգի կողմից սահմանը հատելու ամսաթվերի (դուրս գալու և մտնելու) համադրում:

Բացի այդ, անհրաժեշտ է կենսաթոշակների վճարման պայմանագիր կնքած բանկերի հետ համատեղ մշակել և ներդնել կենսաթոշակառուների նույնականացման միջոցներ, այդ թվում անձանց մատնահետքերով նույնականացումը:

11. Կենսաթոշակների վճարման պայմանագիր կնքած բանկերի հետ համատեղ մշակել և ներդնել կենսաթոշակառուների նույնականացման միջոցներ, այդ թվում՝ անձանց մատնահետքերով նույնականացումը:

12. Մշակել և հաստատել ՀՀ պետական բյուջեի պլանավորման հստակ ցուցանիշներ և հաշվարկման մեթոդաբանություն, այդ թվում՝ հիմնված կանխատեսելի

(ակտուարական) հաշվարկների վրա:

13. Ուսումնասիրել շահառուներին բանկերի միջոցով վճարումների հնարավորությունը՝ ըստ տարածաշրջաններում բանկային ծառայությունների բաշխվածության:

14. Ծառայության տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների ամբողջական վերլուծություն և գնահատում կատարելու նպատակով մոնիթորինգի վարչության աշխատանքային ծրագրում ներառել ստուգումների իրականացման պլան-ժամանակացույց՝ հիմնված ռիսկերի գնահատման հստակ մեթոդաբանության վրա:

15. Ձեռնարկել միջոցներ Ծառայության կողմից վարձակալության հիմունքներով շահագործվող ոչ բնակելի տարածքների օգտագործումն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու, ինչպես նաև իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ պլանավորելու ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝

Հաշվի առնելով վերը նշվածը և Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկատվություն ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ: